# ՍԿԶԲՈՒՆՔ
# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

կամ

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

և

# ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ։

---

Իբրև զարդէ ծնեալ մանկունս բանաւորս, և անխարդախ կաթին ցանկասջիք, զի նովաւ աճեսջիք ի փրկութիւն ։ Ա․ պետրոսի․ Բ․ Բ ։

---

Ի ՄՈՍԿՈՎ․
ի տպարանի Հայկական ճեմարանին Տեարց Լազարեանց ։
1833․

Զայս համառօտութիւն պատմութեանց Ա՟ծաշունչէ սուրբ գրոց գոլով համաձայն ընդարձակ բնագրին՝ հրաման տամ տպելոյ.
Վիճակաւոր Արքեպ. հայոց Ներսէս:

# ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՔԱ-ՀԱՆԱՅԱՊԵՏԻ

## ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

և

*Առաքելաշաւիղ՝ Առաջնորդի Հայոց*

*Ասպետակրի սրբոյն Աղեքսանդրայ Նեւսկեայ և սրբոյն Աննայի առաջին աստիճանի.*

Ա/834

Ամենախոնարհ ընծայաբերութիւն :

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

## ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՔԱՀԱ ՆԱՀԱՊԵՏ

Մի՛ կշռեսցի 'ի նժար հաւասարաչափ փանաքիս այս ընծայաբերութիւն ընդ անքատակ արժանաւորութեան ներանձնացելոյդ Դիտապետի, որ 'ի Քեզ անջինջ պատկերացուցանես յուղփալից պողոտայն առաքինուէ և իմաստից զՇնորհալւոյն կենդանագիր, զնորուն իրաւամբք ժառանգեալ և՛ զանուն և՛ զգովեստ, այլ 'ի կշռոյ՝ սրտիս մատուսցի եռանդն՝ 'ի մի նժար, իսկ 'ի միւսն՝ քրիստոսատիպ հեզահամբոյրդ Քահանայապետի սորկամեծար մարդասիրութիւն։ Պտուղ է այդ հասկաթուռ այգւոյ, զոր տնկեաց աստուածաշէն տուն Լազարեանց, ուրանօր և իմ անձնանուէր ծառա֊

'յեալ գիտութեանց յընթացս երից ամաց, վայելեցի զկուլի շնորհս անմահանձնուն Իշխանապետացս, ընդ որոց հովանաւորութեամբ և զարդիս շարունակեմ զբանասիրական ուսմանցս կարգ 'ի Կայսերական Համալսարանի։ Ո՛չ է այդ ծնունդ բազմաժամանակեայ երկանց, այլ կարճաթիւ րոպէից ազատ աւուրցս, զոր 'ի ձօն նուիրեցի քաղցրայորդոր հրամանի ազգասէր և անդորդ Բարերարիս Ա. Հաղնեայ Խաչատրոյ Շոլիկխեան, թելադրելոյ ինձ համառօտագրել զսկզբունս սրբազան պատմութեան և քրիստոնէական հաւատոյ պարզ ոճով 'ի դիւրումն համբակաց առաջին և երկրորդ դասատան ազգայնոյս Ճեմարանիս։ Ու-

ղեկից ունէի ինձ զհրահանգ քրիս-
տոնէական վարդապետութեան
Միտրոպօլտին Ռուսաց Ֆիլարե-
տի, իսկ 'ի բանս լուսաւորչակրօն
եկեղեցւոյս մերոյ՝ աստուածախրատ
Վարդապետիս էր Միքայելի ար-
ժանացով կրօնագիտութիւն ինձ
ուղեցոյց մատնանիշ։ Որդի՝ ո՛չ
միայն լուսաւորչածին, այլ և քահա-
նայածին, ո՛ւմ այլ ումեք նուիրագոր-
ծել յանդգնէր զառաջինս զայս ե-
րախայրի դուզնաքեայ վաստակոց,
որոյ առարկայ հոգևորին էր քննուի,
եթէ ո՛չ գերընտիր Հովուապետիդ
Քրիստոսադումար խաշանց կողման-
ցըս, որ առաջնոյն ես անսայթաք հե-
տևորդ, և երկրորդին՝ գլուխ քաջա-
լուրջ։

Ընկա՛լ զայս, Աստուածընտիր Քահանայապետ, իբր զպտուղ պարտիզիդ Եկեղեցւոյ, և որպէս զմի 'ի հասուԹից պտղաբեր անդաստանի, յազգասէր Բարերարաց մերոց արօրադրելոյ:

'Ի նշան գոհաբանութեան սրտիս զատատաձիր շնորհացդ

Եւ առ հայր իմ եւ առ իմս

գերդաստան.

Աստուածընտիր Քահանայապետիդ

ամենախոնարհ և սրտեռանդն պաշտօնատար

Յովսէփ Տէր Զաքարեան Չերքէզեան:

# ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ։

Մի է Աստուած, երկրպագեալ յամենասուրբ Երրորդութեան, նոյն և յաւիտենական, այսինքն, որ չունի ոչ զսկիզբն և ոչ զվախճան գոյութեան իւրոյ, այլ միշտ էր, միշտ է և միշտ լինելոց է։

Բայց յԱյ ամենայն ինչ ունի զսկիզբն․ Աստուած ստեղծ զամ յոչնչէ։

Աստուած չունէր պէտս և յոչինչ արարածս, ինքն յինքեան միշտ էր և ինքն ինքեամբ կատարելապէս բաւական և երջանիկ․ այլ արար զամ ըստ բարութեան իւրում, զի ամ արարածք ընկալցին 'ի նմանէ զբարի՝ որչափ կարեն, զուարճասցին և երջանկասցին։

Աստուած ստեղծ զամ բանիւ իւրով ըստ իւրում ամենակար զօրութեան։

'Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր, որք էին անպատրաստ, և տրամաբերեալ զայնս 'ի վեց աւուրս :

Յառաջին աւուր ստեղծ զլոյս :

Յերկրորդում՝ զհաստատութիւն կամ զերկինս, որ երևի մեզ :

Յերրորդում բաժանեաց զջուրն 'ի հողոյ և հրամայեաց երկրի արտադրել զբոյսս և զտունկս :

'Ի չորրորդ աւուր արար զարեգակն, զլուսին և զաստեղս :

'Ի հինգերրորդն՝ զձկունս և զթռչունս :

'Ի վեցերրորդն՝ զերկրաւոր կենդանիս և ապա զմարդն, զորոյ զմարմին ստեղծ Աստուած 'ի հողոյ և փչեաց 'ի նա զհոգի անմահ :

Յեօթներրորդ աւուր հանգեաւ Աստուած յամ գործոյ իւրոյ և սուրբ արար զօրն զայն, զի և մարդն նուիրեսցէ զեօթներրորդ օրն նմա միայնում 'ի պաշտօն և յերկրպագութիւն :

# Երջանիկ կացութիւն առաջին մարդոյ։

Նախասկիզբն մարդոյ անունն էր Ադամ, և նախաստեղծ կնոջն՝ Եւայ։

Աստուած ստեղծ զԵւայ ՚ի կողից Ադամայ, զոր էառ ՚ի նմանէ՝ մինչ նա ՚ի քուն էր։

Մարդիկ ստեղծեալ են ՚ի պատկեր և ՚ի նմանութիւն Աստուծոյ։ Բայց պատկեր Աստուծոյ, որ ՚ի մարդն, ոչ է ՚ի մարմինն, զի Աստուած է անմարմին. այլ է այն ՚ի հոգին, ՚ի սրբութեան և յանմեղութեան կամաց և ՚ի լուսաւոր գիտութեան և յիմաստութեան մտաց։

Ադամ և Եւայ բնակէին ՚ի դրախտի, որ էր դարաստան քաղցրահայեաց, զարդարեալ ոչ մարդկային ձեռամբք, այլ պատրաստեալ նոցա յԱստուծոյ։

Զդրախտս զայս, զբովանդակ երկիր և զհամօրէն արարածս արար Աստուած ընդ իշխանութեամբ մարդոյ։

Գեղազանց քան զամ ծառս դրախտի էր ծառն կենաց ։

Մարդիկ, դարմանեալ 'ի պտղոց ծառոյն այնորիկ, չունէին մեռանել և ոչ իսկ մարմնով ։

Ադամ և Եւայ չունէին պէտս 'ի հանդերձս, վասն զի օդն չունէր ինչ յինքեան խստակար և ապականիչ մարմնոյ. և զի մարմին նոցա էր անապական և մաքուր, վոյ չէր ինչ փոյթ ծածկել նոցա զայնս ։

Պարտաւորութիւն մարդոյ էր ճանաչել և սիրել զԱստուած, և յայսմ միայն գլխաւորապէս կայանայր երջանկութիւն նորա ։

Աստուած հրամայեաց մարդոյ գործել զդրախտն և պահպանել զայն, արգելեալ նմա ուտել 'ի պտղոյ ծառոյ, որ կոչէր ծառ գիտութեան բարւոյ և չարի, և ծանուցեալ նմա՝ զի եթէ կերիցէ յայնմանէ՝ 'ի նմին ժամու մահու մեռցի ։

## Մեղք, մահ և յոյս փրկութեան։

Ամենիմաստ արարչապետն նախքան զառ-

նեղըն լուր զերեւելի եւ զբանական կենդանին զմարդն, առեղծ զաններեւոյթ եւ զիմացական արարածս՝ զերկնային հոգիս, որք կոչին հրեշտակք։

Մի յայս լուսաւոր հոգւոց հանդերձ քանի մի հպատակօք յանդգնեցաւ ընդվզել զանձն ՚ի հնազանդութենէ ամենաբարի կամացն Աստուծոյ արարչապետին իւրեանց, եւ ՚ի ձեռն այսորիկ զրկեալ ՚ի պարգեւեալ նմա լուսոյ եւ յերջանկութենէ, եղեւ հոգի չար, զոր կոչեն սատանայ։

Սատանայն նախանձեցաւ ընդ երջանկութիւն մարդոյ, եւ առ ՚ի զրկել զնա յայնմանէ՝ խորհեցաւ ՚ի գործ դնել զիւր խորամանկութիւն. սա մտաւ յօձն հրապութեաց զԵւայ ճաշակել յարգելեալ պտղոյ անտի, յորմէ կերեալ Եւայի՝ հաճեցոյց յայն եւ զԱդամ։

Սոյնն օրինակաւ մարդն ճաշակեալ ՚ի պտղոյ ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի, ընթացաւ ընդդէմ կամաց Աստուծոյ, եանց

զպատուիրանսն և զօրէնս նորա. և 'ի մի-
քան՝ Քս :

Առաջին հետևութիւնք մեղաց եղեն ամօթ և երկիւղ. իսկ ապա 'ի վերայ հասին յան-ցաւորացն տաժանաւոր կիրք, ցաւք և մահ:

Աստուած անիծեաց զօձն, աքսորեաց զԱդամ և զԵւայ 'ի դրախտէ, և զերկիրն հանդերձ ամենայն տնկովք զրկեաց յառա-ջին օրհնութենէ իւրմէ, զի 'ի նախկին կա-տարելութենէ, որով նայն զուարճանայր, և 'ի բաւականութենէ:

Ամենայն մարդիկ ծագին յԱդամայ, որ մեղաւ և դատապարտեցաւ, և վասն այսորիկ ա-մենեքեան ծնանին 'ի վիճակի մեղաց և դատա-պարտութեան:

Բայց սակայն Աստուած ըստ անթարգման գթածութեան իւրում, յետ առաջին պատուիրա-նազանցութեան մարդկան, ետ նոցա յոյս փրկութեան 'ի պատրիչ սատանայէ, 'ի մե-ղաց և յամենայն թշուառութեանց, որոց պատճառ էր մեղքն:

Յայսմ փրկութեան մարդկան կայանայր յայնմ, զի Աստուած խոստացաւ նոցա, թէ ծնցի 'ի կուսէ փրկիչ, որ յաղթեսցէ օձին, այ͞ սատանայի ։

## Ազ͞ք մարդկան մինչև ցջրհեղեղ ։

Անդրանիկ որդի Ադամայ էր Կայէն, իսկ երկրորդն Աբէլ ։

Կային պարապէր 'ի հողագործութիւնս, իսկ Աբէլ էր խաշնարած ։ Սք երկոքին բերէին Աստուծոյ զպատարագ ։ Կային զոհեաց զպտուղս երկրի, իսկ Աբէլ զնորածինս 'ի խաշանց ։ Աստուած, որում յայտնի է սիրտ ամենեցուն, հաճեցաւ ընդ պատարագ Աբելի, և մերժեաց զԿայենին, որ առ նախանձու և 'ի նեղսրտութենէ սպան զեղբայր իւր զԱբէլ ։

Աստուած անէծ զեղբայրասպանն Կային, որ յայնմհետէ 'ի բովանդակ երկրի ոչ գտանէր ուրեք զհանգիստ և զապահովութիւն ։

Աստուած ընծայեաց Ադամայ զերրորդ որդի՝ զՍէթ, փոխանակ Աբելի․ 'ի Սեթայ

ծնդեցան անձինք բարեպաշտք և բարիք ; իսկ 'ի Կայենէ՝ պիղծք և չարք։ 'ի սերունդս Սիթայ առաւել եւս ևս եղև սրբութեամբ կենաց Ենովք, որ վասն գերազանց արդարութեան իւրոյ համբարձաւ յերկինս առանց ցաւակրութեան և մարմնաւոր մահու ։

Ընթացս ժամանակաց զաւակունք բարի սերնդոց կապակցեցան ամուսնութեամբ ընդ զաւակունս չար սերի․ յայսմանէ դոյցես ամենայն մարդիկ եղեն խառնադնաց։ Մի միայն Նոյ մնաց արդար և արժանաւոր աստուածային սիրոյ և բարեհաճութեան ։

## Ջրհեղեղ։

Արդարադատն Աստուած վճռեաց յանդընդնին խորհրդեան իւրում ջնջել պղեղծեալ զազգ մարդկան ջրհեղեղաւ․ բայց առ 'ի նորոգել զմարդն յետ ջրհեղեղին՝ ընտրեաց զարդարն Նոյ ։

Առ այս վախճան հրամայեաց Նոյի շինել տապան․ որ էր մեծաշէն, քառակուսի և երկայնաձիգ նաւ ։ Յայսպիսի տապան եմուտ

Նոյ գերդաստանաւ իւրով հանդերձ և էառ յամենայն անասնոց, գազանաց և 'ի թռչնոց երկու երկու, իսկ յամաց եօթն եօթն, զի հնար լիցի նոցա բազմանալ յետ ջրհեղեղին։

Զքառասուն օր և զքառասուն գիշեր իջանէր անձրև. ծովք և գետք զեղան զափամբք, և ջուրն ծածկեաց զողջոյն երկիր, ուրանօր ամենայն մարդ և բոլոր կենդանիք երկրի ընկղմեցան՝ բայց 'ի Նոյէ և յորոց ը̅ նմա էին։

'Ի կատարել ջրհեղեղին Նոյ զոհեաց Աստուծոյ զպատարագ գոհութեան վասն փրկութեան իւրոյ, ուր ամենագթածն Աստուած խոստացաւ չառնել միւսանգամ զջրհեղեղ համաշխարհական։

## Ազգ մարդկան յետ ջրհեղեղին և ծագումն ազգաց։

Նոյ ունէր զերիս որդիս, զՍէմ, զՔամ և զՅաբէթ. 'Ի նոցանէ ծագեցան յետ ջրհեղեղին ամենայն մարդիկ, որք կեան այժմ 'ի վերայ երկրի։

Քամ ոչ ընծայելով յարգանս հօր իւ-
րում՝ զրկեցաւ յօրհնութենէ նորա ։

՚ի Քամայ ծագեցան վերկնակի արք չորք
յետ ջրհեղեղին ։

Ընթացս ժամանակաց այնչափ բազմա-
նային չարասէր մարդիկ և զանազան յանցա-
ւորութիւնք, մինչ զի ոչ պաշտէին զԱստ-
ուած, և ոչ պաշտելով զԱստուած՝ մոռա-
նային զնա բոլորովին ։ ՚ի մոռանալն նոցա
զԱստուածն Ճշմարիտ՝ ոչ կարաց հալածե-
լաւ ՚ի սրտէ նոցա խղճմտանքն, որ յորդո-
րէր զնոսա, թէ չէ՛ հնար լինել ումեք ա-
ռանց Աստուծոյ. վասն խորհեցան նոքա պաշ-
տել ՚ի տեղի Ճշմարիտ Աստուծոյ զարեգակն,
զլուսին և զայլ արարածս ։

Ահա այս կոչի հեթանոսութիւն կամ կռա-
պաշտութիւն ։ Ճանաչումն Ճշմարիտ Աստու-
ծոյ հազիւ ուրեք պահպանէր ՚ի սերունդս
Սեթայ ։

Ծագեալ ՚ի միոյ միայն ՚ի մարդոյ, ընդ
աւուրսն ընդ այնոսիկ մարդիկ խօսէին ՚ի մի

լեզու և կացուցանէլին զմի ազգ ։ Հպարտութեամբ իւրեանց 'ի մտի եդին զսնոտի դէտաւորութիւն կառուցանել զաշտարակ երկնաչափ 'ի փառս անուան իւրեանց և 'ի փրկութիւն 'ի ջրհեղեղէ ։

'Ի պատիժ այսորիկ Աստուած խառնակեաց զլեզուս նոցա, ուրանօր ոչ հասկանայր մին զմիւսն, որով և սփռեցան նոքա ընդ ամենայն երկիր։ Ցայսպիսի բաժանմանէ նոցա յայլ և այլ կողմունս աշխարհի ծագեցան զանազան ազգք, որք խօսին 'ի զանազան լեզուս ։

## Աբրահամ և նահապետք ազգին Եբրայեցւոց։

Առ 'ի պահպանել 'ի մէջ մարդկան զճանաչումն և զպաշտօնատարութիւն Աստուծոյ, ամենախնամն արարիչ ընտրեաց զԱբրահամ 'ի ցեղէն Սեթայ ։

Աստուած հրամայեաց Աբրահամու թողուլ զտուն, զազգ և զհայրենիս, և գնալ

յանձանօթ երկիր, զոր խոստացաւ տալ նմա 'ի ժառանգութիւն ։ Աբրահամ հաւատացեալ խոստմանցն Աստուծոյ չուեաց յերկրէն Քաղդէացւոց յերկիրն Քանանացւոց ։

Աստուած յայտնեցաւ Աբրահամու յերազի և 'ի զանազան տեսիլս առ 'ի հաստատել զնա 'ի հաւատս առ ինքն ։

Աստուած յայտնեալ երբեմն զանձն իւր Աբրահամու խոստացաւ նմա առնել զնա հայր բազմութեան ազգաց և լինել նմա սեպհական Աստուած ։ Աստանօր եդ զուխտ ընդ Աբրահամու, և նշան այսր ուխտի եղև Թլփատութիւն ։ Յայնմ իսկ ժամու խոստացաւ Աստուած Աբրահամու շնորհել նմա զորդի Իսահակ ։

Երբեմն տեսեալ Աբրահամու զօտարականս հրաւիրեաց զնոսա առ ինքն 'ի հանգչիլ և 'ի ճաշել ։ Մի 'ի հիւրոց անտի էր Աստուած, ընդ որում և երկու հրեշտակք ։ Աստուած հաստատէր Աբրահամու թէ յետ տարւոյ միոյ ծնցի նմա որդի, որ և կատարե-

ցաւ իսկ, Թէպէտ և էր յայնժամ Աբրահամ հարիւր ամաց ։

Աստուած առաջի արար յօրինակ սերնդոց զհաւատս և զհնազանդութիւն Աբրահամու, և մանաւանդ՝ որ աստ զհետ գայ, զի հրամայեաց Աբրահամու մատուցանել զորդին իւր զԻսահակ յողջակէզ ։

Աբրահամ նոյնհետայն շինեալ զսեղան՝ եդ 'ի վերայ նորա զփայտս և 'ի վերայ փայտիցն զԻսահակ, և առեալ զդանակն 'ի ձեռնուլ զնա՝ արգելաւ 'ի հրեշտակէ ըստ վերնոյն հրամանի ։

'Ի սակս այսպիսի հպատակութեան Աստուած ոչ միայն օրհնեաց զԱբրահամ, այլ և խոստացաւ օրհնել զամենայն ազգս ցեղի նորա, այս էր նշան թէ 'ի զաւակէ նորա ծնանելոց է փրկիչ աշխարհի ։

Իսահակ ծնաւ զՅակոբ, որ կոչէր ևս Իսրայէլ․ իսկ Յակոբ զերկոտասան որդիս, որք կոչին Պատրիարգք, այս հայրապետք, զի նոքա եղեն ազգապետք տոհմին Իսրայէլեայ ։

Օրհնութիւն՝ տուեալն յԱստուծոյ Աբրահամու, փոխանակեցաւ և 'ի սերունդս նորա համաձայն արժանաւորութեան իւրեանց ։ Զայս տեսանել ևս կարեմք տեսանել 'ի Յակոբ և յԷսաւ, որք էին երկու եղբարք երկուորեակք, այլ ունէին զայլ և այլ յատկութիւնս ։ Էսաւ էր վայրենասէր և միշտ պտրտայէր յորս անասնոց, իսկ Յակոբ էր հեզ և բարեպաշտ ։ Էսաւ էր երէց և վասն այն ունէր զառաւել իրաւունս ժառանգելոյ զօրհնութիւն հօր իւրոյ․ բայց գոլով նորա շատակեր և անհամբեր՝ վաճառեաց Յակոբայ զառաջնութիւն իւր ընդ ոսպեայ կերակրոյ ։ Յետ այսորիկ թէպէտ և ցանկացաւ Իսահակ հայր նոցա օրհնել զԷսաւ իբրև զիւր անդրանիկ, բայց գոլով յայնժամ կոյր՝ ընկալաւ զՅակոբ փոխանակ Էսաւայ, որով և զօրհնութիւն նորա ժառանգեաց այն, որ աւելի արժանաւոր էր 'ի նոցունց ։

## Եբրայեցիք յԵգիպտոս։

Մի յերկոտասան որդւոց Յակոբայ էր Յովսէփ, զոր առանձին իմն սիրէր Յակոբ ՚ի պատճառս քաղցրասիրտ անմեղութեան նորա։ Յովսէփ եւս յերազի իբր զի եղբարք նորա երկրպագին նմա. այսու աղագաւ այլ եղբարք նորա վառեալ նախանձու ընդդէմ նորա՝ վաճառեցին զնա լուելեայն յԵգիպտոս։

Յայնժամ հեթանոսական երկրի Յովսէփ եկաց Ցուոյ միշտ հաւատարիմ Աստուծոյ եւ վասն այն փառաւորեցաւ ՚ի Տեառնէ, զի շնորհօք նորա Յովսէփ մեկնեաց զերազն Փարաւոնի, արքային Եգիպտացւոց, որ գուշակէր նմա զեօթնամեայ սով։ Փարաւոն հրամայեաց նմա պատրաստել զհաց եւ պահել վասն սովելոյ ամաց՝ որով զնա առաջին հրամանատար Եգիպտոսի։

Իբրեւ տիրապետեաց սովն ՚ի կողմունսն յայնոսիկ, եկին եղբարքն Յովսեփայ յԵգիպտոս ՚ի գնել զցորեան. ծանուցեալ Յովսեփայ զնոսա յայտնեաց նոցա զինքն եւ ներողա-

միտ լեալ ամ՛ յանցուածոյ նոցա, որ ընդ-
դէմ իւր, հրամայեաց նոցա ածել զհայր
իւրեանց յԵգիպտոս. անդ մնացին Եբրայե-
ցիք զբաղում ժամանակս՝ նաև յետ մահ-
ուան Յակովբայ և Յովսեփայ և բազմա-
ցան յոյժ:

Նոր արքայն Եգիպտացւոց ունելով կաս-
կած զԵբրայեցւոց իբրև զօտարաց, վարէր
ընդ նոսա ոչ ը̃ ծառայից, զուն գործէր
չարչարել և տկարացուցանել զնոսա ծանր
ծանր աշխատութեամբք, հուսկ ուրեմն հրա-
մայեաց սպանանել զնորածին տղայս:

Յայսմ ժամանակի Աստուած առաքեաց
նոցա զՄովսէս առ ՚ի պահպանել զնոսա ՚ի
կորստենէ և ՚ի փրկել զնոսա:

Իբրև ծնաւ Մովսէս, մայր նորա խորհե-
ցաւ պահել զնա գաղտագողի ՚ի սպանանող
արքային Եգիպտոսի, իսկ ՚ի չկարելն նմա պայս՝ եդ-
զնա ՚ի մէջ կողովոյ սակառայ և էարկ զնա ՚ի
ջուր գետոյ: Անդ եղիտ զմանուկս զայս
դուստր արքային Եգիպտացւոց, որ զթա-

ցեալ 'ի նմա էառ զնա և սնոյց իբրև զիւր որդի սեպհական։ Հասեալ Մովսէսի 'ի տիս երիտասարդութեան տառապեալ ցանկացաւ չարչարել ընդ աստուածահաճոյ ժողովրդեանն, քան ուրախանալ 'ի մէջ հեթանոսաց, և առ այս վախճան խոյս ետ 'ի տանէ փարաւոնի։

Յետ անցանելոյ ժամանակաց իբրև Մովսէս ըստ հրամանի Աստուծոյ առաջի եղև փարաւոնի. հանդերձ եղբարբ իւրով Ահարոնիւ և խնդրէր 'ի նմանէ յանուն Աստուծոյ, զի տայցէ նա Իսրայելեցւոց հրաման ելանել յԵգիպտոսէ. բայց որովհետև փարաւոն ընդդիմացաւ յոյժ այսմ, վ՛յ Աստուած եցոյց նմա զմեծամեծ հրաշս, պատժեալ զԵգիպտոս զանազան հարուածովք, որոց վերջին էր կոտորելն հրեշտակին 'ի միում գիշերի զամենայն անդրանիկս ազգին Եգիպտացւոց։ Յայնմ իսկ գիշերի Աստուած եհան զԻսրայելեցիս յԵգիպտոսէ, հրամայեալ նոցա նախքան զանկանելն յուղի, ընուլ

զՊաւղոսն, և միշտ այնուհետև կատարել զայն ՚ի յիշատակ ազատութեան իւրեանց ։

Եգիպտացիք զհետ պնդեցան Եբրայեցւոց, այլ Աստուած հրաշիւք իւրով փրկեաց յար- ձակմանէ նոցա զԵբրայեցիս և կորոյս զԵ- գիպտացիս, զի հրամայեաց սաստկաշօր հողմոյ պատառել զծովն կարմիր և տալ տեղի Եբրա- յեցւոց անցանել անթաց ոտիւք ՚ի սիզաւէտ մարգագետին․ իսկ յորժամ մտին և Եգիպ- տացիք՝ ծածկեաց զնոսա ծովն և ընկղմեցան ամենեքեան ։ Կատարումն Պասեքի կայանայր յայնմ, զի զոհէին ՚ի պատարագ զանարատ գառն, այսինքն զայնպիսի, որ չունէր յինքեան զմարմնաւոր պակասութիւն, զոր և ու- տէին բարեպաշտութեամբ մեծաւ ընդ բա- ղարջի և ընդ դառնահամ խոտից ։ Զոհա- գործութիւն այս էր առաջին գաղափար կամ նախ- նական տիպ և օրինակ այնր, թէ փրկչին աշխարհի պարտ էր բերել անձամբ զանձն ՚ի պատարագ ՚ի փրկել զազգ մարդկան ՚ի ծառայութենէ սատանայի և մեղաց ։

## Օրէնք և սուրբ գիրք (աստուածա֊շունչ)․

Մարդիկ վարէին մինչև ցՄովսէս բնական օրինօք և բերանացի աւանդութեամբ։ Բնական օրէնքն է այն, զոր տայ Ած մարդոյ 'ի ձեռն բանականութեան և խղճմտանաց․ իսկ բա֊ ռիւս սրբազան աւանդութիւն իմանալի է այն, զի գիտութիւն Աստուծոյ և աստուա֊ ծահաճոյ կենաց յայտնեալ մարդկան անմիջա֊ պէս յԱստուծոյ 'ի ձեռն ձայնաւոր պատմու֊ թեանց և օրինակաց՝ աւանդի 'ի ծնողաց առ զաւակունս և առ ամենայն սերունդս։ Պատ֊ ճառն՝ թեան աւանդութեանս օժանդակէր յայնժամ երկարութիւն կենաց մարդկան, յորում ժամանակի կեանք մարդոյ տևէր մինչև ցինն հարիւր ամս մինչև ցջրհեղեղ, իսկ յետ ջրհեղեղի մինչև ցրեք հարիւր․ վասն մի և նոյն մարդն կարէր զքանի մի հարիւր ամս պատմել զգործս Աստուծոյ և մարդկան։

'Ի ժամանակս Մովսիսի կեանք մարդոյ եղև համառօտ քան զառաջինսն, վասն և ոչ բաւէր ա֊ ւանդութիւն յանկորուստ պահպանութիւն ճշմարտութեան։

Բայց յայտնանէ բազմանային միշտ չարագործութիւնք ՚ի մէջ մարդկան, յորմէ և և միտք և խղճմտանք ևս քան զևս խաւարէին: Այսու աղագաւ առ ՚ի պահպանել և ՚ի տարածանել զճշմարտութիւն ՚ի մէջ մարդկան՝ հաճեցաւ Աստուած տալ զօրէնս յայտնութեան և զգրաւոր Գիրս, որ վասն այսր իսկ կոչի աստուածաշունչ:

Օրէնք յայտնութեան են ուսումն զԱստուծոյ և զհնարաւորութենէ լինելոյ հաճոյ Աստուծոյ, զոր ինքն Աստուած անմիջապէս յայտնեաց մարդկան: Իսկ սուրբ գիրք այն գրեալքն աստուածային ազդեցութեամբ:

՚Ի հնգետասաներորդ աւուր յետ ելիցն Եբրայեցւոց յԵգիպտոսէ յայտնեաց Աստուած նոցա զհանդիսանալն իւր ՚ի լերինն Սինայի պատեալ հրով և ծխով և ՚ի ձայն փողոց, ուրանօր ետ նոցա զօրէնս, որոց գլխաւորքն են տասն հրամանքս:

1) Նախ՝ ես եմ Տէր Աստուած քո, մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն.

2) Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որինչ յերկինս ՚ի վեր և որինչ յերկրի ՚ի խոնարհ և որինչ ՚ի ջուրս ՚ի ներքոյ երկրի. մի՛ երկիր պագանիցես նոցա և մի՛ պաշտեսցես զնոսա։

3) Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի վերայ սնոտեաց։

4) Յիշեսջի՛ր զօրն շաբաթու սրբել զայն (որ է՝ զկիւրակէս) զվեց օր գործեսցես և արարասցես զա՟մ գործ քո, յաւուրն եօթներորդի շաբաթ տեառն Աստուծոյ քո։

5.) Պատուեա՛ զհայր քո և զմայր քո զի բարի լիցի քեզ և երկարակեաց լիցիս ՚ի վերայ երկրի։

6.) Մի՛ սպանաներ։

7.) Մի՛ շնար։

8.) Մի՛ գողանար։

9.) Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։

10.) Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, մի՛ ցանկանար տան ընկերի քո և մի՛ անդոյ նորա, և մի՛ ծառայի նորա և մի՛ աղախնոյ նորա և մի՛ եզին նորա և մի՛ իշոյ նորա և մի՛ ա՟մ անասնոյ նորա և մի՛ ա՟մի, որ ինչ ընկերի քո իցէ։

Այս պատուիրանք գրեալ էին յերկուս տախ-
տակս քարեղէնս և եդեալ ՚ի տապանակին ուխ-
տին, որ շինեալ էր ՚ի մեծագին փայտէ և
պատեալ ոսկւով, իսկ տապանակն ուխտի ե-
դեալ կայր ՚ի խորանի, յորում և ճրագարան
և սեղան վասն խնկարկութեան և վասն դնե-
լոյ զհաց : Առաջի խորանին շինեալ էր զո-
հարան, ուրանօր բերէին զզոհս և զպատա-
րագս : Ծառայողք խորանին էին քահա-
նայապետք, քահանայք և Ղևտականք ՚ի ցե-
ղէ Ղևեայ, որդւոյ Յակոբայ :

Աստուած պահանջէր յամենեցունց զխո-
նարհութիւն օրինաց իւրոց և յայնժամ նոր
ին յուսադրեաց զԻսրայելս տալ նոցա զեր-
կիրն Քանանացւոց, զխոստացեալն Աբրահա-
մու : Նա նոցա միանգամ զյոյս Փրկչին ա-
ւետարանէ, իբրև մեծ Մարգարէի, որոյ սկիզբն և
օրինակ էր միայն Մովսէս, որ գրեաց զօրէնս
Աստուծոյ և զխոստմունս նորա յառաջին
գիրս Աստուածաշնչի :

## Պանդխտութիւն Եբրայեցւոց յանապատի և մուտ յերկիրն Քանանացւոց։

Եբրայեցիք գնացին յԵգիպտոսէ յերկիրն Քանանացւոց ընդ անապատն Արաբիոյ։ Աստուած առ 'ի հաստատել զնոսա յաւաւել ջերմեռանդն հաւատս առ ինքն՝ եցոյց նոցա զզանազան սքանչելիս 'ի պանդխտութեան նոցա։

Հրեշտակ Տեառն գնայր յառաջոյ՝ առաջնորդեալ նոցա 'ի տունջեան սեամբ ամպոյ, իսկ 'ի գիշերի սեամբ հրոյ։ 'Ի պակասիլ հացին կերակրէր զնոսա Աստուած մանանայիւ, որ յամ աւուրս իջանէր յերկնից, և 'ի չգտանելն նոցա զջուր՝ հրամայեաց Աստուած Մովսիսի մխել զգաւազան իւր 'ի ջուրն դառն, որ կայր անդ, և ջուրն այն իսկոյն փոխեցաւ 'ի քաղցր և 'ի գործածական։ Իսկ մինչ ոչ գտին նոքա ամենևին զկաթիլ մի ջրոյ, Մովսէս ըստ հրամանի բարձրելոյն եհար գաւազանաւ 'ի լեառն ապառաժուտ և նոյնժամայն բղխեաց անտի ջուր, որ լիացոյց

Յապուրդ զվից հարիւր հազար Եբրայեցւոց։ Ո՛չ հայելով յայս ամենայն՝ Եբրայեցիք չէին հաւատարիմ Աստուծոյ։ Մինչ Մովսէս գտանէր ՚ի լերին Սինայի զքառասուն աւուրս, արարին Եբրայեցիք զցուլ ոսկի և երկրպագանէին այնմ իբրև Աստուծոյ՝ բազմօրինակ բարձեալ զտրտունջ զՄովսէսէ և զԱստուծոյ իսկ։ ՚Ի մերձենալ նոցա յերկիրն Քանանացւոց ծանեան, զի որք բնակէին անդ ազգք հզօր էին յոյժ քան զինքեանս և չունելով զհաստատուն յոյս առ Աստուած, որ առաջնորդէր նոցա յերկիրն յայն, ՚ի մտի դնէին դառնալ յետս յԵգիպտոս։ Սորին աղագաւ պատժեաց զնոսա Աստուած թափառիլ յանապատի զքառասուն ամս և բանդխտիլ անդ։

Այն լինէր ՚ի կատար հասանէր ժամ թափառական պանդխտութեան նոցա, զրաւեալ Մովսէս ՚ի կենաց ՚ի սահմանս խոստացեալ երկրին։ Մտից նոցա յերկիրն յայն առաջնորդեաց Յեսու Նաւեան, որ յաղթեալ ազ-

գաց ընդ եղելոյ՝ բաժանեաց զերկրին զայն երկոտասան սերնդոց Իսրայելի ։

Աստուած ձեռնտու եղև և յայսմ ալլի խուռն ընտրելոյ նորանոր հրաշիւք ։ Գետն Յորդանան պատառեցաւ յերկուս և ետ անցս Իսրայելեայ անցանել ընդ ցամաք յայնկոյս ։ Մեծակառոյց պարիսպք Երիքովի, զոր պաշարեցին շուրջանակի Իսրայելիք, անկան կործանեցան յերկիր իբրև անցուցին տապանակն ուխտի շուրջ զնոքօք՝ հարեալ զփողս և զԹմբուկս ։

## Դատաւորք ։

Իբրև հարկ եղև Իսրայելեայ բնականալ յԵրիքով, Աստուած հրամայեաց նոցա տաքսել անտի զամ նախնի բնակիչս քաղաքին, իսկ Իսրայելիք ոչ արարին՝ զոր ասացն նոցա Աստուած, վայ և ծագեցան մեծամեծ Թշուառութիւնք վասն նոցա ։ Ազգի բնակիչք երկրին Քանանացւոց էին հեԹանոսք, վայ և հրապուրեցին և զԻսրայեցիս ՚ի հեԹանոսուԹիւն, որք ՚ի ձեռն այսո-

րին զրկեցան 'ի շնորհաց և յօգնականութենէ Աստուծոյ. զի հեթանոսք այնուհետև գտան 'ի մէնջ յաղթական և արարին զնոսա ին-քեանց արբանեակս ։

Այն ինչ Եբրայեցիք խելամուտ եղեն ա-մենայնի 'ի պատճառս տարաբաղդութեան իւրեանց, դարձան առ Ճշմարիտն Աստուած, որ ըստ իւրում անյիշաչար ողորմութեան յայտնեաց նոցա զգթասրտութիւն իւր և ա-ռաքեաց նոցա զպատիչ ։ Յայնժամ որք քաջք և արիասիրտք էին, յուսացեալ 'ի Տէր և 'ի նմին իսկ խրախուսեալ 'ի Տեառնէ, առին զիշխանութիւն կառավարութեան նոցա և յաղթական գտեալ 'ի վերայ հե-թանոսաց ետուն ազգի իւրեանց ճաշակել զխաղաղաւէտ անդորրութիւն ։ Սոքա անուա-նին դատաւորք Իսրայէլացւոց ։ Ահաւասիկ Գե-դէոն յայտնութեամբ հրեշտակին կոչեցաւ 'ի փրկութիւն Եբրայեցւոց 'ի ձեռաց Մա-դիամացւոց ։ Երիք հարիւր անսպառազէն զօրօք շուրջ ընթացեալ պղնձամօք 'ի բա-

նախս նոցա 'ի ձայն յանկարծագոչ փողոց և 'ի լոյս ղամբարաց, շարժեաց զնոսա յայնպիսի ահ և 'ի սասանումն, զի ինքեանք նոքա այր զընկեր կոտորեալ դարձան 'ի փախուստ, որոց զհետ պնդեալ Գեդէոնին՝ բնաջինջ արար զզօրս և զառաջնորդս նոցա ։

Վերջին 'ի դատաւորս էր Սամուէլ մարգարէ, որ յաղթեաց փղշտացւոց և յարդեց կրկնակի զանկեալ պաշտօնատարութիւն Ճշմարտին Աստուծոյ, կառավարեալ զԻսրրայելի անշահախնդիր կատարելութեամբ ։

## Թագաւորք ։

Որովհետև երկու որդիք Սամուելի մատնեցին զանձինս մեծի վաշխառութեան և հեշտէին գլխովին Ճշմարտութեն, ազգն Իսրայեցւոց ցանկացաւ ունել թագաւոր ։ Առ այս վախճան Աստուած ընտրեաց նոցա 'ի թագաւոր զՍաւուղ 'ի ցեղէն Բենիամինի, զոր և էօծ Սամուէլ սրբազան միւռոնաւ, բայց զի Սաւուղ ոչ կատարէր զկամս Աստուծոյ, վ՟ս ընտրեցաւ յԱԾ 'ի տեղի նորա Դաւիթ,

որ էր կրտսեր յեօթն որդիս Յեսսեայ 'ի տոհմէն Յուդայ ։ Դաւիթ կարի իմն փառաւորեցաւ յըմբշամարտութ̃ անդ , յորում պարտաքերից սպան զփղշտացին զԳողիաթ, որ էր բարձրահասակ և զօրաւոր ։ Թէպէտ և Սաւուղ նախանձեցաւ ընդ Դաւիթ , բայց Դաւիթ հեզութեամբ և համբերութ̃ տարաւ երկարատև հալածանաց նորա, զի համարէր զնա օծեալ Տեառն ։ Դաւիթ 'ի ձեռն հեզութ̃ իւրոյ և բարեպաշտութ̃ ժառանգեաց զառանձին սէր և զօրհնութիւն Ա.Յ, որոյ վ̃ և թագաւորեաց յետ մահուան Սաւուղայ 'ի Հրէաստան և յաղթական պտեալ 'ի վերայ բազմաթիւ ազգաց՝ տարածեաց զսահմանս տէրութ̃ իւրոյ։ Այս զօրէն Աբրահամու լուաւ յԱ.Յ զնոր խոստումն, թէ 'ի տոհմէ նորա ծնցի փրկիչ աշխարհի , որ թագաւորեսցէ յաւիտեան ։

Զտեղի Դաւթայ յաջորդեաց որդի նորա Սողոմոն , որ զերահռչակ հանդիսացաւ յծ̃ի 'ի ձեռն իմաստութ̃ իւրոյ , զոր խնդրեաց

յԱստուծոյ յաղօթս եւ ընկալաւ: Սա փո- խանակ հնոյ խորանին կառուցեալ 'ի փառս Բարձրելոյն զհոյակապ տաճար 'ի մայրաքա- ղաքին Յերուսաղէմ թագաւորեաց խաղաղաւէտ անդորրութեամբ:

Պանծացեալ իմաստութեամբ Սողոմոն չկարաց պանծալ եւ զգաստութեամբ, զի զհետ կրթեալ շաւղին՝ հօրն 'ի սէր կա- նանց հեթանոսաց, որք ձգեցին զնա 'ի կռա- պաշտութիւն իսկ, յոյր սակս եւ զրկեալ 'ի բարե- հաճութենէ Աստուծոյ, եթող զտէրութիւն իւր 'ի մեծի անկարգութեան:

Յետ մահուան նորա բաժանեցաւ տէրու- թիւնն 'ի բազում մասունս, յորոց երկու միայն ցեղք Յուդայ եւ Բենիամինի կացին մնացին 'ի հպատակութեան որդւոյ նորա Ռո- բովամայ, իսկ մնացեալ տասն ցեղք ապստամ- բեալ 'ի հնազանդութենէ նորա՝ եղեն ընդ իշխա- նութեամբ Յերոբովամայ, որ թագաւորեաց 'ի վերայ նոցա թէպէտ եւ առանց իրաւանց: Աստի ծագեցան երկու թագաւորութիւնք

Յովաքայ և Իսրայելացւոց։ Երկուցեալ Յերոբովամայ, զի մի հպատակք իւր միաւորեսցին վերստին ընդ տէրութեան Յուդայ, զուն գործեաց դարձուցանել զնոսա 'ի կռապաշտութիւն և արգելուլ զնոսա գնալ յԵրուսաղէմ յերկրպագութիւն Ճշմարտին Աստուծոյ։ Այս եղեւն չարութեան ևս քան զևս տարածեալ խանգարէր զբարս ամենեցուն, որով և կործանեցաւ տէրութիւն Իսրայելացւոց, և որովհետև զնոյն ախտ ախտացաւ և Յուդա, վաղ 'ի կործան անկաւ և նորին տէրութիւն, թէպէտ փոքր մի յետոյ քան զառաջինն։

## Մարգարէք։

Ամենատեսն Աստուած ընտրեալ էր 'ի մաղնջուց զքանի մի բարեպաշտ անձինս, որք ըստ հոգւով նորա սրբով բացայայտ առնելով մարդկան զկամս Աստուծոյ՝ կոչեցան Մարգարէք, զի նախագուշակէին զապագայս։ Թէև մարգարէից բազմացաւ յետ բաժանման տէրութեան Իսրայելացւոց 'ի Յուդայէ, և ամենեքին նոքա միաձայն կշտամբէին զկռապաշ-

տուն և զարատիս, նախաձայնէին զպատիժս, զոր տալոց էր Ա՟ծ մարդկան վ՟ն այնց մոլորաշեալ ընթացից, իսկ ընդ հակառակն մխիթար մատուցանէին բարեպաշտ անձանց և հաստատէին զյոյս նոցա 'ի շնորհս Աստուծոյ և 'ի փրկութե՟ ձեռաց նր՟ : Մի 'ի քաջազօր կշտամբողաց դիցապաշտութե՟ հանդիսացաւ մարգարէն Եղիայ, որ նախատեաց աչօք՝ դուշակեաց Աքայաբու, կռապաշտ արքային իսրայելացւոյ, զեռամեայ երաշտ և զսով և առ 'ի ապացուցանել զոչնչութե՟ ստապատիր չա՟ծցն և զամենակարող զօրութե՟ ճշմարտին Ա՟Յ, հուր իջոյց յերկնից 'ի յառաջեդեալ զոհս : Սա յարոյց զորդի այրւոյ Սարեպտայ, արժանացաւ խօսիլ ը՟ Ա՟Յ 'ի լերինն Քորեբ և համբարձաւ յերկինս զօրէն Ենովքայ :

Զանկմանէ տէրութե՟ն Յուդայ, զԵրուսաղեմայ և զտաճարին գուշակեցին բազումք 'ի մարգարէից, առաւել ևս Եր՟եմիայ, որ ետես և գուշակեաց և զվերականգնումն Երուսաղեմայ : Բայց գլխաւոր առարկայ նախա-

գուշակութեց մարգարէից էր խոստացեալ փրկիչն Տի, զոր նախահայեաց նկատմամբ տեսեալ նոյա՝ կոչէին զնա որդի Դաւթի, Մեսիայ կամ Քրիստոս, Օծեալ Տեառն Թագաւոր արդարութեան, Ած հզօր, իշխան Տի, հայր ապագայ դարուն, և այլ բազմօրինակ բանիւք սքանչելահրաշ նկարէին զյայտնիլն նր յերկրի, զծնանիլն 'ի կուսէ, զլինելն նորա անմեղ, բայց և զչարչարիլն վասն մեղաց մերոց, առ 'ի տանջանօք իւրովք ազատել զմեզ 'ի մեղաց ։ Խօսեցան մարգարէքն և զպարգևելոյ Այ մարդկան զնոր կտակարան և զպառնալոյ հեթանոսաց իսկ 'ի հաւատս Քի և զերկրպագելոյ նմա իբր Աստուծոյ Ճշմարտի ։

## Ազգն Յուդայ 'ի Բաբելոնն ։

Արատաւոր սէրուն Իսրայելացւոց կործանեցաւ 'ի զօրայն Ասուր, մինչ զի ոչ և վերականգնեցաւ . մեծ մասն ազգին Իսրայելացւոց վարեցաւ 'ի գերութի և ցիր և ցա սփռեցաւ ընդ զանազան կողմունս երկրի ։

Իսկ ընկերուն Յուդայ տապալեալ Նաբուգոդոնոսոր, արքայ Բաբելացւոց, որ աւերեալ զԵրուսաղէմ և հրոյ ճարակ տուեալ զտաճարն' վարեաց 'ի գերութի զմեծ մասն ազգին Յուդայ 'ի Բաբելոն. բայց ամենատեսն Աստուած ոչ իսպառ եթող կորնչել ազգին այսմիկ, յորմէ ծնանելոց էր փրկիչն աշխարհի ։

Յերևեցաւ Նաբուգոդոնոսորայ երազ զարհուրելի, որում ոչ մարթացեալ լինել խելամուտ և ոչ պահել կարաց զայն 'ի յիշողութե ։ Զայս գաղտնի յայտնեաց Աստուած մարգարէին Դանիէլի նոյնպէս 'ի տեսլեան, որ յուշ արարեալ արքային' մեկնեաց զերազն, որ ցուցանէր զչորեսին թագաւորութիւն, որք ունէին հետևիլ մի զհետ միւոյ, 'ի վախճանի որոց ունէր Աստուած հիմնել զանվախճան թագաւորութիւն ։ Այսու ազդեալ փառաւորեաց Նաբուգոդոնոսոր զԱստուած ճշմարիտ և ետ զմեծ իշխանութի 'ի ձեռս Դանիէլի 'ի տէրութե Բաբելացւոց ։ Ըստ հրա-

մանի նորին իսկ Նաբուգոդոնոսորայ անկան Անանիայ, Ազարիայ և Միքայէլ ՚ի բոցբոքեալ հնոց, զի ոչ երկրպագին ոսկեղէն պատկերի, զոր նայն կանգնեաց։ Բայց Աստուած հրաշիւք իւր պահպանեաց զնոսա անվնաս, որոյ ականատես լեալ Նաբուգոդոնոսորայ՝ փառս ետ մեծին Ճշմարտին Աստուծոյ և ետ երեցունց նց գլխաւորութիւն ՚ի մէջ ազգին Յուդայ, որ էին ՚ի տէրութեան իւրում։ Սովին եղանակաւ ազգն Յուդայ ազատ մնայ ՚ի կռապաշտութէ, որ թագաւորէր ՚ի Բաբելոնի և մանաւանդ թէ ուղղեցաւ ՚ի հակամիտութէ առ դիցապաշտութի ։ ՚Ի սոյնէ առեալ զգեղեցիկ օրինակ սկսան Ճանաչել զՃշմարիտն Ած և նոյն իսկ հեթանոսք։ Յայտնեաց Աստուած Դանիէլի թէ Քրիստոս եկեսցէ յաշխարհ ՚ի վախճանի եօթանասնեկին եօթն ամաց, այսինքն յետ անցանելոյ 490 ամաց յետ շինութեան Երուսաղեմայ ։

## Ժամանակք եօթանասնեկաց Դանիէլի ։

Կիւրոս, արքայ Պարսից, նուաճեալ զտէ-

բութիւնն Բաբելացւոց ըստ կանխաստոյ բա-նից մարգարէից եւ ազգին Յուդայ զազա-տութիւն վերադառնալ ՚ի հայրենիս իւրեանց, զի նորոգեսցեն անդ զԵրուսաղէմ և զտա-ճար Բարձրելոյն։ Դարձ արարեալ ՚ի հայրենիս իւրեանց՝ ազգն Յուդայ կայր դեռ-եւս ընդ իշխանութեամբ արքայից Պարսից, ընդ որոյ հովանաւորութեամբ կառոյց զերկ-րորդ անգամ տաճար Երուսաղեմայ։

Անգէ և Զաքարիա մարգարէք քաջալեր մատուցանէին Յուդայի ՚ի յառաջադրու-թեանս յայսմիկ և ՚ի նոյն միաձայն յորդո-րէին. իսկ Մաղաքիա նախագուշակեաց թէ յայսմ տաճարի յայտնեսցի Քրիստոս։

՚Ի քայքայել Աղեքսանդրու մեծի զտէ-րութիւն Պարսից և ՚ի հիմնելն զՅունացն՝ ազգն Յուդայ առաւել քան զոր յառաջն ընկալաւ զհաղորդակցութիւն ընդ Յունաց, Ասորւոց, Եգիպտացւոց և հուսկ ընդ Հռով-մայեցւոց։

Աստուածաշունչն թարգմանեցաւ ՚ի լեզու

Յունաց, որ առեալ էր 'ի կիրառութեան քան զամենայն լեզուս ազգաց ժամանակայն այնորիկ :

Ազգն Յուդայ ըստ ալալօր տկարութեան իւրում կրէր զմեծամեծ վնասս և զչարիս 'ի շրջակայ ազգաց, յորոց միջի Անտիոքոս Եպիփան, արքայն Ասուր, էած զամենադառն հալածանս 'ի վերայ նոցա, զի 'ի մտի եդեալ դարձուցանել զնոսա 'ի դեն հեթանոսական՝ կանգնեաց զպատկերն 'ի տաճարին Երուսաղեմայ : Տունն Մակաբայեցւոց 'ի քահանայական ցեղէ յարեաւ 'ի պաշտպանութիւն անսայթաք հաւատոց, որ կանգնեալ զճշմարիտ աստուածպաշտութիւն ըստ աստուածադիր օրինաց՝ պաշտպանեցին հայրենեացն և եղեն առաջնորդ ազգին Յուդայ : Բայց սակայն ազգն Յուդայ յաւուրս յայսոսիկ տեսանէր զինքն յանընդհատ կասկածանս նորանոր վտանգից ստրկութեան 'ի ձեռաց հեթանոսաց : Յայսպիսի դժուարակիր արկածս քաջալերէին նոքա զմիմեանս, առաջի առնելով

գայս յայտնութեան խոստացեալ փրկչին ։ Բայց բազումք 'ի նոցանէ խաբէին, կարծելով թէ գալոց է Քրիստոս 'ի հիմնել զերկրային թագաւորութիւն, որում տիրապետել համարէին նոքա ։

## Կարապետն Քրիստոսի Յովհաննէս ։

'Ի թիւ քահանայից երկրորդ տաճարին Երուսաղեմայ էր Զաքարիա, այր բարեպաշտ և արդար՝ որպէս և կին իւր Եղիսաբեթ ։ Սոքա հասեալ 'ի խորին ծերութիւն չունէին զաւակ, զի Եղիսաբեթ էր ամուլ ։

Յաւուր միում մինչ Զաքարիա խնկարկէր 'ի տաճարին, երևեցաւ նմա հրեշտակ, որ աւետէր, թէ ծնցի նմա յԵղիսաբեթէ որդի՝ Յովհաննէս անուն, որ լինի նախընթաց Քսի փրկչին և պատրաստեսցէ զմարդիկ առաջի նորա յընդունելութիւն նորա ։ Երկուցեալ Զաքարիայ ընդ միտաղլան բանին, նոյն ժամայն պապանձեցաւ մինչև ծնաւ նմա խկա-

ալէս ողջի, որով առեալ նորա զկատարումն բանից Հրեշտակին կոչեաց զանունն Յովհաննէս ։

Այն այս Յովհաննէս բնակէր յանապատի ծածկելով զմարմին իւր ստեւով և ունելով կզօտի մաշկեայ․ ուտէր զմարախ եւ զմեղր վայրենի, որ էր կերակուր խիստ և չքաւոր։ Զբազումս ՚ի մարդկանէ մկրտէր ջրով Յորդանանու, քարոզելով նոցա զապաշխարութիւն և զմերձիլն արքայութեան երկնից, ՚ի Քրիստոսի ։

## Աւետիք սրբոյ կուսին ։

Յետ աւետելոյ հրեշտակին ծննդեան նախընթացն մարգարէին Քրիստոսի, հրեշտակապետն Գաբրիէլ առաքեցաւ յԱստուծոյ առ կոյսն Մարիամ ՚ի Նազարէթ, որ թէպէտ և ծնեալ էր ՚ի թագաւորական ցեղէ, զի էր ՚ի սերնդոց Յուդայ յազգէ Դաւթի, բայց կեայր ՚ի չքաւորութեան։ Խօսեցաւ Մարիամ Յովսէփայ նոյնպէս ՚ի ցեղէն Դաւթի, զի մի

միայն հոգ տարցէ նա զինքենէ, բայց ունէր զնա միշտ 'ի կուսութեան խորհուրդ ։

Աւետեաց նմա հրեշտակապետն թէ ծնցի զորդի առանց առն 'ի հոգւոյն սրբոյ և կոչեսցէ զանուն նորա Յիսուս, և թէ նա կոչեսցի որդի Բարձրելոյն և թագաւորեսցէ 'ի յաւիտեան ։ Ընկալեալ Մարիամայ հաւատով և հեզութեամբ զայս աւետիս՝ յղացաւ յարգանդի խորհուրդ զՅիսուս 'ի հոգւոյն սրբոյ ։ Իբրև գնաց Մարիամ առ Եղիսաբէթ յայտնեաց Աստուած Եղիսաբեթի զգաղտնիս զայս, որ և նոյնժամայն կոչեաց զՄարիամ մայր Տեառն ։

## Ծնունդ Քրիստոսի ։

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ երկիրն Յուդայ էր ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց, յորոց վերայ թագաւորէր յայնժամ Օգոստոս ։ Սա հրամայեաց աշխարհագիր առնել զամենայն մարդ․ վասն Յովսէփ և Մարիամ գնացին 'ի Նազարեթէ 'ի հայրենի

քաղաք իւրեանց Բեթղեհէմ ։ Աստ ծնաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի սուրբ կուսէն Մարիամայ և եդաւ ի մսուր անբանից, զի ի խուռներնթաց բազմութենէ մարդկան չէր հնար գտանել տեղի ինչ ի տան ։

## Երկրպագութիւն Հովուաց ։

Յայնժամ իսկ գիշերի յայտնեցաւ հրեշտակն հովուաց Բեթղեհեմի մինչ նոքա զհօտս իւրեանց արածէին և աւետեաց նոցա զծնունդ փրկչին, որ է Քրիստոս Տէր և զի ծանիցեն նոքա զնա՝ յաւել հրեշտակն թէ տեսցեն զմանուկն եդեալ ի մսուր. զայս լուեալ հովուացն գնացին և երկրպագին նորածին մանկանն նախքան զամենեսեան ։

## Թլփատութիւն Քրիստոսի ։

Ընդ անցանել ութ աւուրց Քրիստոս Տէրն մեր թլփատեցաւ ըստ սովորութեան հնոյն ուխտի և կոչեցաւ Յիսուս, զոր ասացեալ էր հրեշտակին մինչև ցյղանալն նորա յարգանդի կուսին ։ Յիսուս թարգմանի Փրկիչ ։

## Տեառնընդառաջ.

'Ի քառասներորդ աւուր յետ ծննդեան Յիսուսի բերին զմանուկն Յիսուս 'ի տաճար ծնողքն նորա, որպէս պատուիրեալ էր յօրէնս Աստուծոյ 'ի Մովսիսէ: 'Ի ժամանակին յայնմիկ կեայր յԵրուսաղէմ Սիմէօն, այր ծերունի և բարեպաշտ, որում ասացեալ էր յԱստուծոյ չտեսանել զմահ մինչև տեսցէ զօծեալն Քրիստոս:

Ըստ ազդեցութեան հոգւոյն Աստուծոյ եկն ծերունին 'ի տաճար, և առեալ զմանուկն Յիսուս 'ի գիրկս իւր գոչեաց՝ „ արդ արձակես զծառայս քո՛ տէր, ըստ բանի քում 'ի խաղաղութի, զի տեսին աչք իմ զփրկութի քո, զոր պատրաստեցեր ամենայն ժողովրդեան “:

Ընդ ծերունւոյն Սիմէօնի գովասանէր յայնժամ զԱստուած Մարգարէուհին Աննայ և պատմէր զփրկչէն ամենեցուն, որք ակնունէին նմա հաւատով:

## Կոտորած տղայոց։

Յերկրպագութիւն նորածին փրկչին եկին յարեւելից ՄՈԳՔ, այն է իմաստասէր աստեղաբաշխք, որք ծանեան զծնունդ նր̄ ըստ յայտնութ̄ առատափայլ աստեղ յերկինս։ Յայնմ իսկ ժամանակի Թագաւորէր ՚ի վր̄ ազգին Յուդայ ՀԵՐՈՎԴԷՍ, որ չէր ծնեալ յարքայական տոհմէ։ Սա իբրեւ լուաւ ՚ի մոգուցն՝ թէ ուր է ծնեալ արքայն Հրէից՝ խռովեցաւ յանձն իւր՝ կասկածեալ, զի մի նորածին արքայն բարձցէ երբեմն զԹագաւորութիւն նորա։ Ա՛կ ջան եդեալ իմանալ զտեղին, ուր ծնաւ Քրիստոս, ո՛չ եգիտ զնա եւ հրամայեաց սպանանել ՚ի Բեթղեհէմ եւ յա̄մ շրջակայս քաղաքին զմանուկ տղայս, որոց չիցէ դեռեւս երկու ամ, յուսալով զի եւ զՔրիստոս սպանցէ։ Բայց մինչչեւ էր հասեալ հրամանս այս ՚ի կատար, երեւեցաւ Յովսեփայ հրեշտակ ՚ի տեսլեան եւ յայտնեաց նմա զդիտաւորութիւն Հերովդեայ, հրամայեաց նմա առնուլ զմանուկն եւ զմայր

նորա և խոյս տալ անտի յԵգիպտոս, ուր աճապարհալ նոցա մնացին անդ մինչև ցմահ Հերովդեայ և ապա դարձան 'ի Նազարէթ ։

## Մկրտութի̅ Քրի̅ ։

Իբրև եհաս Յս̅ 'ի տիս երեսուն ամաց, եկն 'ի Յորդանան առ Յովհաննէս մկրտիլ 'ի նմանէ, ո՛չ զի պէտս ունէր մկրտութեան, այլ զի հաճեցաւ տալ մեզ յայնմ զօրինակ ։ Յովհաննէս ցանկայր ինքն մկրտիլ 'ի նմանէ, բայց հնազանդեալ կամաց նորա՝ մկրտեաց զնա ։ Յաւարտել Քրի̅ զմկրտութի̅ իւր և յելանելն 'ի ջրոյն՝ բացան երկինք և հոգին սբ̅ աղաւնակերպ էջ 'ի վր̅ նորա և ձայն եղև յերկնից, որ ասէր ,, այդ է որդի իմ սիրելի, ընդ որ ես հաճեցայ ‘‘ ։

## Քարոզութի̅ Քրի̅ ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս յետ մկրտութե̅ իւրոյ եկաց զքառասուն աւուրս յանապատի պահօք և աղօթիւք, փորձեցաւ 'ի սատանայէ և յաղթեաց նմա աստուածային բանիւ իւրով և երևեցաւ աշխարհի ։

Քարոզէր միշտ 'ի քաղաքս և յաւանս և 'ի տաճարին Երուսաղէմայ ։ Գլխաւոր առարկայ քարոզութն նր էր բանն, ապաշխարեցէ՛ք և հաւատացէ՛ք յԱւետարանն ։ Բառս Աւետարան նշանակէ պատուող բարի աւետեաց, զի 'ի նմա աւետի մեզ թողութիւն մեղաց յԱստուծոյ և պարգևելն արքայութեան երկնից 'ի ձեռն Քրիստոսի։ Ապաշխարելն է ատել զմեղս, խոստովանիլ սրտիւ զանօրէնութիւնս, խնդրել յԱստուծոյ զթողութիւն, դնել զհաստատ յառաջադրութի չմեղանչելոյ յապագայն և կելոյ ը̅ կամաց Աստուծոյ ։

## Առաքեալք ։

Քրիստոս ընտրեաց զերկոտասանս յաշակերտաց իւրոց և առաքեաց զն̅ս 'ի զանազան տեղիս 'ի քարոզութիւն առ 'ի տարածել զաւետարանն 'ի մէջ ա̅մ մարդկան և անուանեաց զն̅ս առաքեալս, որոց անուանքն են Պետրոս և Անդրէաս, Յակոբոս և Յովհաննէս, Փիլիպպոս և Բարթողոմէոս, Մատթէոս, և Թովմաս, Յակոբոս Ալփեան և Սիմոն Բորաւ,

Յուդա Յակոբեան և Յուդա Իսկարիովտացի, որ և եղև մատնիչ Յիսուսի :

## Աղօթք Քրիստոսի .

Յիսուս տէրն մեր աղօթէր հանապազ 'ի գիշերային պահու 'ի միայնութե. խնդրեցին 'ի նմանէ առաքեալքն, զի ուսուսցէ նոցա աղօթել, որք և ընկալան 'ի նմանէ և մեզ աւանդեցին ԶԱՂՕԹՍ ԶԱՅՍ,, Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եւ՛՛ եւն:

## Առակք Քրիստոսի .

Քրիստոս իբր 'ի բազումս առաջի անկէր ժողովրդեան զվարդապետութի իւր առակօք, ցմ՜ նմանութբք և առեղծուածովք : Ներքուք սատանօր յառաջ օրինակի աղագաւ զմի 'ի բազում առակաց անտի՝ համառօտ մեկնաբանութբ հանդերձ :

Ել սերմանահան սերմանել, և 'ի սերմանել իւրում էր՝ որ անկաւ առ ճանապարհաւ և եկն թռչուն երկնից և եկեր զնա. և այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում և վաղ

վաղվաղակի բուսաւ առ 'ի չգոյէ հիւթոյ երկրին · 'ի ծագել առաւօտուն տապացաւ և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ, և այլն անկաւ 'ի մէջ փշոց և ելին փուշքն և հեղձուցին զնա, և այլն անկաւ յերկիր բարի և տայր պտուղ, էր՝ որ հարիւրաւոր և էր՝ որ վաթսնաւոր և էր՝ որ երեսնաւոր ։

Սերմանոհանն է Յս Քս · սերմն նշանակէ զբանն Ած · երկիրն՝ զսիրտ մարդկան ։ Որք զսերմն անկեալ 'ի Ճանապարհի կոխոտեն անցաւորք և կտցահարեն թռչունք, նոյնպս յափշտակէ սատանայ զբանն Ած 'ի սրտից բազմազբաղ արանց։ Եւ որք յապառաժուտ տեղւոջ թէպէտ և ցուցանէ զբողբոջ, բայց վաղվաղակի չորանայ, նոյնպս որ անհաստատ է և չէ լեալ խելամուտ քրիստոնէական ուսմանց, թէպէտ և ընդունի զայն, բայց 'ի ժամ հալածման կորուսանէ զայն ։ Զորօրինակ բազմութի վատթար դալարեաց խափանեն զցորեան, նոյն օրինակ և բազմաւորդով Ծական զբաղմունք հոգոց և ցանկութեց խանգարեն զներգործութի բանին Ած 'ի սիրտ

մարդոյ ։ Որ 'ի պարարտ երկրի ա̄մ սերմն բերէ զպտուղ յորդառատ, նոյնպէս 'ի բարի և 'ի սուրբ սիրտս, որք հաւատով և համբերութ̄ պահպանեն զբանն Ա̄Ծ, բերէ նա զպտուղ բազմառատ հոգևոր պարգևաց, առաքինութ̄ և երջանկութ̄ ։

## Հրաշագործութի̄ք Ք̄Ի ։

Բայց յաստուածայեղ ուսմանց, սերմանելոյ 'ի Քրիստոսէ 'ի սիրտս մարդկան, Ք̄Ս յայտնեաց զինքն փրկիչ Ա̄Ծ, ա̄ծայեղ գործովք և հրաշիւք ։ Նա միշտ հրաշագործէր 'ի պատճառս գթասրտութ̄ իւրոյ առ եղկելի վիճակ մարդկան, զի կամ հիւանդաց ընծայէր զառողջութի̄ կամ կուրաց զտեսութի̄, խլից զլսել, համրոց զխօսիլ և մեռելոց զկեանս և զա̄մ զայսոսիկ զհրաշս առնէր միով և եթ հպեցմամբ կամ շօշափմամբ և կամ բանիւք և եթ ։

## Այլակերպութի̄ Տեառն ։

Քարոզեալ զապաշխարութիւն և զհաւատս՝ Ք̄Ս տէ̄ն մեր խօսէր զխաչէն ։ Ասէր

յառաջագոյն թէ վ՟ն փրկութ՟ Տ՟ի պարտ է նմա չարչարիլ, մեռանիլ և յառնել. և թէ հետևողաց իւրոց հարկ է մոռանալ զանձինս, և առնուլ զխաչն՝ գնալ զկնի նորա, զ՟ի թէ՝ պարտ է նոցա լինել պատրաստ 'ի զրկիլ յամ՟է և տանիլ ա՟մ նեղութեանց առ անկորուստ պահպանել զհաւատս իւրեանց, որ առ նա, և վ՟ն փրկութ՟ հոգւոց իւրեանց:

Որովհետև չարչարանքն Ք՟ի ունէր յերկիւղ մեծ ածել զաշակերտս նորա, վ՟յ Քրիստոս կանխաւ ի՟մ եցոյց ոմանց 'ի նոցանէ զփառս իւր առ 'ի հաստատել զյոյս նոցա առ ինքն: Նա մինչ աղօթէր նա 'ի լերինն՝ Ճառագայթեցան դէմք նորա իբրև արեգակն և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև ձիւն: Երևեցաւ նմա Մովսէս և Եղիա և լուսափայլ ամպ հովանացաւ 'ի վերայ նորա և որոց ընդ նմա էին, և ձայն եղև յերկնից 'ի հօրէ ամենակալէ, թէ՝ այս է որդի իմ սիրելի, դմա լուարուք:

Վկայ եղեն հրաշափառ այլակերպութեան

տեառն առաքեալքն Պետրոս, Յակովբոս և Յովհաննէս :

## Յարութ̅ Ղազարոսի :

Մի 'ի գերագանց հրաշից, որով փառաւորեցաւ տէրն մեր Յս̅ նախքան զչարչարանս իւր՝ եղև յարութի Ղազարոսի : Եկեալ տեառն 'ի Բեթանիա, ուր բնակէր Ղազարոս՝ 'ի չորրորդում աւուր մահուան նորա, եգիտ զնա թաղեալ : Իբրև հրամայեաց տէրն բանալ զգերեզման նորա, յայնժամ ասէ քոյրն Ղազարոսի Մարթայ ցՅիսուս՝ թէ զգալի լինի հոտն գարշելի 'ի մարմնոյ նորա. բայց Յս̅ ոչ հայեցեալ յայն՝ գոչեաց առ մեռեալն „ Ղազարէ, եկ արտաքս “ և յարուցեալ մեռեալն ել 'ի գերեզմանէ անտի :

## Մուտն Յի̅ յԵրուսաղէմ :

Յետ յարութ̅ Ղազարոսի գնաց Յս̅ յԵրուսաղէմ՝ զի մերձ էր Պասէքն, զոր տեսեալ բազմաց 'ի ժողովրդենէ՝ առին զոստս արմաւենեաց և ելեալ նմա ընդ առաջ գո-

չէին ,, ողջամտոյն ուղղոյ Դաւթի, օրհնեալ եկեալ յանուն տն՟ , ողջամտոյն ՚ի բարձունս՟։

Իսկ ոմանք տարածանէին զհանդերձս իւրեանց առ Ճանապարհաւն մինչ գնայր Քս՟ նստեալ ՚ի վերայ իշոյ. այսպէս մտանէր արքայն Քրիստոս իւրով հանդիսավեհութբ՟ յԵրուսաղէմ ։

## Մ՝ատնիչ Յի՟ Յուդա ։

Աշակերտք ազգին Յուդայ և դպիրք տրտունջէին զՔս՟է , զի նա յանդիմանէր զարատս նոցա , և նախանձէին ընդ փառս նր՟. յետ յարութեանն նր՟ զՂազարոս և յետ փառաւորութն՟ , զոր եցոյց նմա ժողովուրդն ՚ի մտանելն նորա յԵրուսաղէմ , յաւելաւ առաւել ևս ատելուին՟ թշնամեացն ընդդէմ նր՟, որք միտ եդին սպանանել զնա , և զի մի՟ արգելցէ ամբոխ ժողովրդեանն զդիւախոհ չարամտուի՟ իւրեանց , ջան դնէին ունել զնա լռելեայն ՚ի ձեռն խարդախամիտ խորամանկուե՟ իւրեանց ։

Մի յերկոտասան առաքելոց Յուդա Իս-

ապերախտն՝ խորհրդակցեալ յախտ արծաթսի-րութեան՝ առաջի արար ծերոցն Իսրայէլի մատ-նել նոցա զՅիսուս դրամօք, յորոյ ընկա-լեալ զերեսուն արծաթ, կատարեաց զոր ՚ի մտի եդեալն էր . բայց և զղջացեալ ընդ այն կարի անպայման՝ մատնեցաւ ՚ի կորուստ յաւիտենական, յուսահատեալ գլխովին ։

## Երեկոյ աւագ հինգշաբաթի ։

Իբրև եղև երեկոյ, յորում պարտ էր ը̄ օրինաց Մովսիսի կատարել զպասեքն, Քս տէրն մեր եկն ՚ի տուն երուսաղէմացւոյ ու-րուք առաքելովք իւրովք հանդերձ լնուլ անդ զաւանդութիւն պասեքին ։ Ընդ լուաց Քս զոտս աշակերտաց իւրոց առ ՚ի ցուցանել նց զօրինակ հեզաբարոյ խոնարհութեան . ուրա-նօք և զեկից աշակերտացն թէ զի՜նչ ինչ լինելոց էր ՚ի գիշերին յայնմիկ ընդ նմա, ցուցանելով զմատնիչն իւր . իսկ զՊետրոսէ, որ խոստանայր լինել պատրաստ առ ամ̄ ինչ ը̄ ան իւրում թէ և մեռանել հասանիցէ նմա, ա-սաց՝ թէ երիցս ուրասցի զնա մինչչև հաւու

իցէ խօսեալ ։ Յայսմ իսկ երեկոյի առ ապագայ յիշատակի չարչարանաց իւրոց, մահուանն և յարութեան և 'ի նշան յաւիտենական միաւորութեան իւրոյ ընդ հաւատացելոց իւրոց, սահմանեաց զմեծ խորհուրդն սքանչելի հաղորդութեան, ուրանօր առեալ զհաց՝ օրհնեաց, եբեկ, ետ աշակերտաց և ասէ՝ առէք, կերէք, այս է մարմին իմ. և առեալ զբաժակ՝ օրհնեաց, ետ աշակերտաց և ասէ՝ արբէք 'ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտի ։ Այս իսկ կատարի մինչև ցայսօր յԱստուածային պատարագին ։

## Չարչարանք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

'Ի կատարել Քրիստոսի զպասէքն՝ ել 'ի պարտէզն Գեթսեմանի, ուրանօր սկիզբն եղև բազմատագնապ խռովութեանց հոգւոյ նորա վասն մեղաց մերոց, որք նեղեալ զսիրտն մարմնազգեցիկ, յարտասուս շարժէին և 'ի քիրտն արիւնռուշտ 'ի յուշ մահառիթ տանջանացն մինչ էր հրեշտակն 'ի զօրացուցանել զնա ։

Նոր աւարտեալ էր Յիսուս զաղօթս, մինչ այս մինչ այն եկին զօրք իսրայէլացւոց սուսերօք և բրօք և ըստ մատնութեան Յուդայ կալան զՔրիստոս և ածին առ քահանայապետս • յորում ժամանակի աշակերտքն Յիսուսի թողին զնա և փախեան ։ Յարեան առ քահանայապետին սուտ ամբաստանողք զՔրիստոսէ, որք սակայն ոչի՛նչ մարթացան ապացուցանել ։

Բայց 'ի վախճանի անդ մինչ եհարց զնա քահանայապետն թէ որդի՞ ես Աստուծոյ, նա ետ պատասխանի, դու ասես, և յաւել ես թէ տեսցեն զնա փաղփաղակի ընդ աջմէ մեծութեան Աստուծոյ հօր, յայնժամ հռչակեալ զնա արժանաւոր մահու, ապտակէին զնա և հայհոյէին ։ 'Ի միւսում աւուր վաղքաջ ընդ առաւօտն առաջի արարին զՔրիստոս 'ի դատաստան Պիղատոսի հռովմէական կառավարչին 'ի Հրէաստան, որ չդտեալ յանցանս ինչ 'ի Քրիստոս կամեցաւ արձակել զնա, այլ ամբոխ ժողովրդեանն ըստ բա-

նից քահանայապետից խնդրէր մատնել զնա ՚ի մահ ։ Յայնժամ Պիղատոս հրամայեաց զան հարկանել զՔրիստոս, զգեցուցանել նմա զծիրանիս եւ դնել ՚ի գլուխն զփշեայ պսակ. զի ժողովուրդն տեսեալ զնա ՚ի մեծի տառապանի գթասցի ՚ի նա. բայց նոքա բարձրաձայն աղաղակէին՝ ՚ի խաչ հան զդա։ Պիղատոսի չզօրեալ զայլ հնարս՝ ետ նոցա զՔ͞ս լուացեալ զձեռս իւր առաջի ժողովրդեանն ՚ի ջուր ՚ի նշան անմեղութեան Քրիստոսի եւ անպարտութեան իւրոյ յարենէ արդարոյն ։

Տարան յայնժամ զՔրիստոս ՚ի լեառն Գողգոթայ եւ ՚ի խաչ հանին զնա ընդ մէջ երկուց աւազակաց, յորոց աջակողմեանն ՚ի վերայ խաչի զղջացեալ դարձաւ ՚ի Ք͞ս ասելով,, յիշեա՛ զիս տէր, յորժամ գաս արքայութեամբ քով" որ եւ ընկալաւ ՚ի նմանէ զպատասխանի,, այսօր ընդ իս լինիս ՚ի դրախտին" ։

Յիսուս տէրն մեր ՚ի խաչափայտի իւրում աղօթէր ՚ի վերայ թշնամեաց իւրոց, միխիթարէր զանապական մայրն իւր եւ հրա-

մայէր Յովհաննու լինել նմա յորդի։ Նոյն 'ի ժամ սովալի չարչարանաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի արեգակն խաւարեցաւ, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան և բազումք 'ի մեռելոց յարուցեալ երևեցան բազմաց յԵրուսաղէմ և 'ի վախճանի կոչեալ Յիսուսի 'ի ձայն մեծ՝ Ամենայն ինչ կատարեալ է, աւանդեաց զհոգի իւր 'ի ձեռս Աստուծոյ Հօր իւրոյ։

## Աւագ շաբաթ։

Յիսուս մեռաւ 'ի վերայ խաչափայտի յերեկոյի անդ, յորում լուսանայր միաշաբաթն։ Յովսէփ՝ յԱրիմաթեայ քաղաքէ, որ գաղտ աշակերտեաց Յիսուսի, խնդրեաց 'ի Պիղատոսէ զմարմին Յիսուսի և իջուցեալ զայն պատեաց կտաւով և եդ 'ի նորափոր գերեզմանի 'ի պարտիզի իւրում։

Ղուկաս էր Հրէից, նախանձու ատելութեան վառեալ ընդդէմ Քրիստոսի, թէ կուշակեալ էր նա զյարութեան իւրմէ, սա-

կայն ոչ ընծայէին հաւատ մեծ բանիցս այ-
տոցիկ ։ Բայց ոչ մի առաքեալքն փաղա յափշ-
տակեցին զմարմին Քի, խորհեցան կլորա-
մանկունս նոր, որով պահանջեալ 'ի Պիղա-
տոսէ զզօրականս՝ եղին զնմ պահապան գե-
րեզմանին և զայն կնքեցին ։

## Յարուն ․Քի ։

'Ի հետևեալ աւուր, որ կոչի առ մեզ կիւ-
րակէ, գնային բարեպաշտ կանայք վաղքաջ
ը առաւօտն 'ի գերեզման Յի օծանել զմար-
մին նր իւղով, զոր ոչ կարացին առնել 'ի
ժամ թաղման ։ Իսկ ոչէն 'ի գերեզմանէ
անտի թաւալեալ էր հրեշտակ տն, յորոյ 'ի
տեսլենէ սարսեալ էին պահապանքն և փա-
խուցեալ սպառաբեկ ։ Ի—ղ—ճէլն տեսին զգե-
րեզմանն բաց և գտին յայնմ միայն զհան-
դերձս տն, որով կրթեալ 'ի զարմանս լբ-
եալ 'ի հրեշտակէ թէ խաչեցեալն Քս յա-
րէա— ։ Ղուսկ ապա և ինքն յարուցեալն տր
յայտնեցաւ իւղաբերիցն, առաքելոց, և այ-
լոց բազմաց ։ Թ—ջ—, որ յերկուանայր

է̄ յարու̄ն Ք̄ի, եւ Յիսուս շօշափեալ զվէրս իւր, զձեռս եւ զկող։ Առաքելոց իւրոց յայտնեալ միւսանգամ յետ քառասուն աւուրց՝ խօսեցաւ է̄ նո̄ զարքայութէ̄ երկնից, խոստացաւ նց̄ առաքել զՄխիթարիչ Հոգին. Հրամայեաց նց̄ երթալ յա̄մ, քարոզել ա̄մ ազգաց զաւետարանն եւ մկրտել զն̄ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։

## Համբարձումն Ք̄ի։

Յայտնեալ զանձն Առաքելոց 'ի քառասներորդ աւուր յետ յարուե̄, էառ զն̄ Յ̄ս յԵրուսաղեմէ 'ի լեառն Ձիթենեաց, եւ օրհնեալ զն̄ Համբարձաւ առաջի նց̄ յերկինս, է̄ որ պշուցեալ առաքելոց տեսին զհրեշտակս, որք ասէին նց̄ ,, Արք Գալիլեացիք՝ զի՞ կայք ընդերկար պշուցեալ յերկինս, այս Յ̄ս, որ վերացաւ 'ի ձէնջ, նոյնպ̄ս եւ եկեսցէ առ ձեզ"։

## Գալուստ Հոգւոյն Սրբոյ։

Յետ համբարձման տն̄ առաքելաւք դար-

ձան յԵրուսաղէմ․ ուր միաբան աղօթիւք ականունէին գալստեան Հոգւոյն սրբոյ ։ 'ի Հնգետասաներորդ աւուր յետ յարութեան եղև յանկարծակի գոչիւն յերկնից այգուցն իբրև զօրաւոր հողմոյ, և 'ի վերայ իւրաքանչիւրոց 'ի նոցանէ երևեցան լեզուք 'ի հրոյ, որով լցան ամենեքեան Հոգւով սրբով և սկսան խօսել 'ի զանազան լեզուս, զորս ոչ գիտէին ցայնժամ։ Ժողովեցաւ ամբոխ բազմութ մարդկան և սքանչանայր ընդ գերբնական յայտնութիս այս ։ Սատանոր Առաքելոյն Պետրոս սկսաւ քարոզել զաւետարանն հոգէզօր վարդապետութբ, մինչ 'ի նմին իսկ աւուր փոխեաց 'ի հաւատս Քի արս իբրև երեք հազարս։ Այսու եղանակաւ վաղեմի տաճարն իւր փոխեցաւ 'ի նոր Քրիստոնէական Եկեղեցի, որ է ժողով հաւատացելոց 'ի Քս ։

## Գործք առաքելոց ։

Իբրև առաքեալն Պետրոս բուժեաց զկաղն առ դրամբ տաճարին Երուսաղեմայ՝ խռնե-

յաւ ամբոխ ժողովրդեանն, ուրանօր միով բանիւ դարձոյց միաբանգամ 'ի Քս զհինգ հազար այր։ Անհաւատ Իսրայէլացիք ջանալով խափան դնել տարածումն քրիստոսական քարոզութե, ածէին մեծամեծ հալածանս նախ առաջին 'ի վերայ առաքելոց և ապա ամ հաւատացելոց Յերուսաղէմ։ Առաքեալք մատնեցան 'ի նոյանէ 'ի բանտ և 'ի չարչարանս, իսկ նախասարկաւագն Ստեփաննոս քարկոծ լեալ նահատակեցաւ ։

Սաստկագոյն հալածանքն անհաւատից եղեն պատճառ տարածմանն հանդիսանալոյ քրիստոնէութե, զի աշակերտեալքն վարդապետութե Քի և առաքելոց նր 'ի պատճառս հալածանացն սփռեցան յայլ և այլ ծագս երկրի և առաւել ևս տարածեցին զուսումն աւետարանական հաւատոյ։ Սօղոս, մի 'ի գլխաւոր հալածչայ քրիստոնէից 'ի գնալն իւրում 'ի Դամասկոս ետես յանկարծակի 'ի ցերեալ երկնից կլոյս մեծ և լուաւ անտի զբարբառ, որ ասէր ցնա,, Սօ՛ղոս, սօ՛ղոս, զի՞ հալածես զիս “ ։

Այսպիսի գերահրաշ յայտնութիւն ինքն տէրն Քրիստոս դարձոյց զՍօղոս առ ինքն և ընկալաւ զնա ՚ի թիւ առաքելոց իւրոց. որ մկրտեալ ՚ի Դամասկոս յառաքելոյ անտի՝ փոխեաց զանունն ՚ի Պօղոս և եղև փութաջան և նախանձաւոր քարոզիչ Ճշմարտութեան հաւատոյ Քրիստոսի ։

Կորնելիոս, հարիւրապետ Հռովմէական գնդաց, որ չունէր դեռևս զլուսաւոր Ճանաչումն Ճշմարտին Աստուծոյ, կոչեաց առ ինքն ըստ խրատուց հրեշտակին զառաքեալն Պետրոս, գոլով և ինքն այր Աստուածապաշտ և բարերար, առ ՚ի լսել ՚ի նմանէ զբանս փրկութեան։ Եւ մինչ քարոզէր Պետրոս նմա և ընդ նմա եղելոցն չարչարանաց, զմահուանէ, զյարութենէ Քրիստոսի և միանգամայն զփրկութենէ հոգւոյ, որ լինի հաւատովք ՚ի Քրիստոս, Հոգին սուրբ էջ ՚ի վերայ ամենեցուն նոցա, որ լսէին զբանսն, ուստի նոր մկրտեալ Պետրոս զնոսա՝ սկսաւ քարոզել ոչ միայն Հրէից, այլ և հեթանոսաց ։

Առաքեալն Պօղոս քարոզէր բազում աշ-

դաց հեթանոսաց, բայց առաքել և ս ազգին Յուդայ ։

՚Ի սահմանեալ եկեղեցին առ ՚ի կատարել զխորհուրդս և առ ուսուցանել զհրահանգ քրիստոսական վարդապետութեան եդին առաջնորդս, զէպիսկոպոսս, զքահանայս, և զսարկաւագունս ։

## Սուրբ գիրք նորոյ կտակարանի ։

Առաքեալք ոչ միայն քարոզեցին և խօսեցան բանիւք, այլ և առ մնացեալսն ի պահպանութիւն հաւատոց Քրիստոսի և քարոզութեանց գծագրեցին զբանսն ՚ի գիրս աղդեցութեամբ Հոգւոյն սրբոյ ըստ նմանութեան հին մարգարէից ։

Առաջին գիրք նորոյ կտակարանի է Աւետարան Մատթէոսի, զոր գրեաց նա ութ ամօք յետոյ քան զհամբարձումն Քրիստոսի յերկինս ։ Սոյն պարունակի պատմութիւն կենաց և քարոզութեան Քրիստոսի։ Զկնի նորա ՚ի գիր արձանացուցին զնոյն նիւթ ա-

ւետարանիչք Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս, յորոց զվերջինն նախապատուութեամբ անուանէ Եկեղեցի՝ Աստուածաբան, զի աւետարան նորա գերազանց իմն իմաստիւք ճառէ զնախայաւիտեան Ծննդենէ տեառն Յիսուսի և բղխմանէ Հոգւոյն սրբոյ 'ի հօրէ Աստուծոյ:

Առաքեալքն Յակոբոս, Պետրոս, Յովհաննէս, Յուդա և Պօղոս գրեցին զքսան և զմի թուղթս յհաւատոց Քրիստոսի և զկանոնաց քրիստոնէական կենաց:

Առաքեալն Քրիստոսի Յովհաննէս աստուածաբան 'ի գիրս Յայտնութեան իւրոյ, առաջի առնէ մեզ զմարգարէութիւն զվիճակէ եկեղեցւոյն Քրիստոսի մինչև ցկատարած աշխարհի:

## Յաւելուած 'ի սրբազան պատմութիւն յեկեղեցականէ:

Քրիստոնէութիւն գերահրաշ արագութեամբ տարածեալ ընդ տիեզերս, կրեաց և 'ի բազում տեղիս զհալածանս 'ի հրէից և 'ի հեթանոսաց:

Կայսրն Հռովմայ Կոստանդիանոս, դարձեալ ՚ի հաւատս Քրիստոսի յայտնութեամբ հրաշափայլ խաչին յերկինս, մկրտեցաւ ՚ի Քս̄ և ապահովեաց զեկեղեցին Քրիստոսի ՚ի խաղաղաւէտ անդորրութեան։ ԶԿոստանդնուպօլիս արար նա քրիստոնէական մայրաքաղաք ՚ի տէրութեան իւրում ։

Հայաստանեայց սուրբ եկեղեցիս մեր, շինեալ ՚ի վերայ "հիման քարոզութեան առաքելոյն Թադէոսի և Բարթուղիմէոսի, պահէ միշտ կառաքելական ուղղափառ հաւատս ։ Յառաջին յերկիս դարս Քրիստոսի ՚ի Թադէոսէ և ՚ի Բարթուղիմէոսէ սկսեալ հովուեցին զեկեղեցիս հայոց բազմութիւնք եպս̄ց ՚ի մեծ և ՚ի փոքր Հայաստանի, որպէս վիմօրդ և ներէր ժամանակն հալածանաց ՚ի կռապաշտ թագաւորաց Հայոց, Հռովմայեցւոց և Պարսից։ Առաւել պայծառափայլ հանդիսացաւ Քրիստոնէութիւնն առ Տրդատաւ քաջազօր քարոզութեամբ Գրիգորիոսի Պարթևի՝ առաջին պատրիարգին և Կաթու-

ղեկոսի Հայոց, միանգամայն և լուսաւորչի համօրէն տանս Հայոց, որ առաքելական հոգւով ժառանգեալ զաթոռ սուրբ առաքելոց և քարոզեալ յամսն 302=332, անցոյց զառաքելական պատիւն 'ի յաջորդս իւր 'ի կաթուղիկոսս մեր ։

Ընկերեցին Գրիգորի յետ առաքելոց կառավարել ըստ բանից սուրբ գրոց և ըստ առաքելական աւանդութեանց · իսկ յայլ ինչ դիպուածս 'ի կշտամբել զուսումն սուտպատիր վարդապետաց և 'ի հերքել զմոլար երկբայութիւնս, գումարին ժողովք, որք լինին տիեզերական (ընդհանրական) և մասնաւոր · 'ի տիեզերական ժողովս խմբին հովուապետք և ուսուցիչք հաւատոյ ամենայն եկեղեցեաց, որ ընդ տիեզերս · իսկ 'ի մասնաւորս՝ հովիւք որ և իցէ առանձին եկեղեցեաց ։

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՎԱՐԺՈՒԹԵԱՆ·

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ·

Հ· Ո՞ր ուսումն է հարկաւոր մարդոյ առաւել քան զամենայն։

Պ· Ուսումն Քրիստոնէական հաւատոյ և առաքինութեան։

Հ· Վասն է՞ր։

Պ· Վասն զի այդ հոգեվարժութիւն մերձաւոր առնէ զմարդն Աստուծոյ և յաւիտենական փրկութեան, որ անվախճան երջանկութեան նորա։

Հ· Զիա՞րդ հնար է մերձաւորիլ Աստուծոյ։

Պ· Մտօք, կամօք և գործովք։

Հ· Զիա՞րդ նշանակէ մերձաւորիլ Աստուծոյ մտօք։

Պ· Նշանակէ ճանաչել զնա և աներկբայ սրտիւ հաւատալ ՚ի նա։

Հ. Զի՞նչ նշանակէ մերձաւորիլ Աստուծոյ կամօք (յանկութեամբք)։

Պ. Նշանակէ սիրել զնա և պաշտել, ապաւինիլ ՚ի նա և աղօթել հոգւով։

Հ. Զի՞նչ նշանակէ մերձաւորիլ Աստուծոյ գործովք։

Պ. Նշանակէ ընթանալ ըստ կամաց Աստուծոյ և գործել ըստ օրինաց նորա։

Հ. Որո՞վ միջոցաւ հնար իցէ ճանաչել զԱստուած և հաւատալ ՚ի նա։

Պ. ՚Ի ձեռն լուսաւոր բանականութեան և հանգանակին հաւատոյ։

Հ. Զիա՞րդ պարտ իցէ աղօթել Աստուծոյ։

Պ. Հրահանգելով ՚ի տէրունական աղօթսն։

Հ. Ո՞վ ուսուցանէ մեզ ընթանալ ըստ կամաց Աստուծոյ և ըստ օրինաց նորա գործել։

Պ. Տասն պատուիրանք Աստուծոյ։

## Յաղագս հանգանակի հաւատոյ ։

Հ․ Զի՞նչ բաժանի հանգանակն հաւատոյ ։

Պ․ Յերկոտասաներորդ մասունս ։

Հ․ Ասա ինձ զառաջին մասն հանգանակին ։

Պ․ Հաւատամք ՚ի մի Ա՟Ծ, ՚ի հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից ։

Հ․ Զի՞նչ ուսուցանէ մեզ այս առաջին մասն հանգանակի ։

Պ․ Ուսուցանէ մեզ զհինգ ինչ, նախ՝ թէ մի է Ա՟Ծ. երկրորդ՝ թէ Ա՟Ծ է մի և ունի զերիս անձինս. երրորդ՝ թէ առաջին անձն ամենայն երրորդութեան է հայրն Ա՟Ծ. չորրորդ թէ այս երեքսրբեանն Ա՟Ծ ստեղծ զերկինս և զերկիր, զա՟մ երևելիս և զաներևոյթս. հինգերրորդ՝ թէ Ա՟Ծ ունի զա՟մ ՚ի ձեռին իւրում և զա՟մ կառավարէ ։

Հ․ Ասա զերկրորդ մասն հանգանակին ։

Պ․ Եւ ՚ի մի տէր Յ՟ Ք՟. յորդին Ա՟Յ ծնեալն յԱ՟Յ հօրէ միածին, ո՟ր յէութէ հօր,

Ած յԱյ, լոյս 'ի լուսոյ, Ած ճշմարիտ յԱյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն 'ի բնութէ հօր, որով ամ̄ ինչ եղև յերկինս և 'ի վ̄ր երկրի։

Հ. Զի՞նչ ուսանիմք մեք յայսմ մասին հանգանակի։

Պ. Աստի ուսանիմք մեք նախ՝ թէ երկրորդ անձն սր̄ երրորդութե̄ է որդին Այ Յս̄ Քս̄. երկրորդ՝ Յս̄ Քս̄ է մի միայն որդի Այ, և չիք ոք այլ որդի Այ նման նմա. երրորդ՝ որդին Այ ծնեալ է յԱյ հօրէ նախքան զյաւիտեանս և վ̄կ է նա անվախճան՝ ոպ̄ և հայր Ած. չորրորդ՝ Յս̄ Քս̄ է ճշմարիտ Ած 'ի ճշմարտէն Այ և համագոյակից է Այ հօր. հինգերորդ՝ որդին Այ չէ ստեղծեալ, այլ նա ստեղծ զամ̄։

Հ. Ասա՛ 'ի լուր զերրորդ մասն հանգանակին հաւատոյ։

Պ. Որ յաղագս մեր մարդկան և վս̄ մերոյ փրկութե̄ իջեալ 'ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապս̄ 'ի Մարիամայ սր̄յ կուսէն հոգւովն սր̄վ։

Հ. Զի՞նչ ուսուցանէ մեզ այդ մասն հանգանակին զորդւոյն Ա.Յ։

Պ. Ուսուցանէ մեզ 1) թէ որդին Ա.Յ էջ յերկնից, և առեալ զբնութի մարդկային, զ͞ի զհոգի, զմիտս և զմարմին՝ եղև մարդ կատա-րեալ, ոչ կորուսեալ և զա͞ծային իւր բնութ͞ի. որով և յայտնեալ 'ի մ͞ր երկրի՝ կոչեցաւ Յ͞ս Ք͞ս. 2) թէ Յ͞ս Ք͞ս ծնաւ յերկրի յա-մենասուրբ կուսէն, որ յղացաւ զնա իջմամբ Հոգւոյն սրբոյ և մնաց միշտ 'ի կուսութե։ 3) թէ Յ͞ս Ք͞ս եկն յա͞շ 'ի փրկել զմարդիկ 'ի մե-ղաց, յորս ծնանին նք և կեան, և յաղա-տել 'ի մահուանէ, յոր դատապարտեալ էր ա͞մ մարդ 'ի նախահօրէն անտի մարդկան։

Հ. Ա՛ռ չորրորդ մասն հանգանակին։

Պ. Չարչարեալ (Ք͞ն) խաչեալ, թաղեալ։

Հ. Զի՞նչ իմանամք այսու մասամբ հանգանակի։

Պ. Սովին իմանամք մեք 1) թէ Ք͞ս խա-չեցաւ, և կրեալ զբազում չարչարանս մեռաւ և թաղեցաւ. 2) թէ զայս չարչարանս կրեաց

ոչ վ̄ն իւր, զի անմեղ էր ինքն և անարատ, այլ վ̄ն մեր, յ̄ համբերեաց մեծամեծ տանջանաց և մահու խոկ 'ի փրկել զմեզ 'ի մեղաց և 'ի մահուանէ ։

Հ. Ասա զհինգերորդ մասն հանգանակին։

Պ. Յերրորդ աւուր յարուցեալ ։

Հ. Զի՞նչ տաս մեզ իմանալ այդ մասն հանգանակի ։

Պ. Թէ Յ̄ս Ք̄ս յերրորդ աւուր յետ մահուան իւրոյ յարեաւ 'ի մեռելոց, որպէս գրեալ է 'ի գիրս մարգարէից ։

Հ. Ասա զվեցերորդ մասն հանգանակին։

Պ. Ելեալ 'ի յերկինս նստաւ ընդ աջմէ հօր ։

Հ. Զի՞նչ ուսանիմք մեք աստի ։

Պ. Թէ Յ̄ս Ք̄ս 'ի քառասներորդ աւուր յետ յարութ̄ իւրոյ համբարձաւ յերկինս մարմնով և նստաւ ը̄ աջմէ հօր իւրոյ հաւասար զօրով նմա կարողութ̄ և փառօք ։

Հ. Ասա զեօթներորդ մասն հանգանակին ։

Պ. Գալոց է (Ք̅ս̅) նոյին մարմնով և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմե-ռեալս ։

Պ. Զի՞նչ տափ մեզ հնար լիցէ իմանալ ։

Պ. Թէ Յ̅ս̅ Ք̅ս̅ համբարձեալ է միւսան-գամ գալ յերկնից փառօք և դատել ա̅մ մարդ, զկենդանիս և զմեռեալս, ուր և յա-րութիւն ա̅մ մարդկան ։

Հ. Ասա՛ զութերրորդ մասն Հանգանակին ։

Պ. Հաւատամք և 'ի սբ̅ Հոգին յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս ։

Հ. Որպիսի ուսումն յայսմ մասին Հան-գանակի պարունակի ։

Պ. Թէ Հոգին սբ̅ է երրորդ անձն ա-մենասբ̅ Երրորդութե̅. 2) Հոգին սբ̅ Հաւա-սարակից է Հօր և որդւոյ, և տայ ա̅մ արա-րածոց զկեանս. 3) Հոգւոյն սբ̅յ պարտա-ւորիմք ընծայել զՀաւասար երկրպագութի̅ և զփառս ը̅ Հօր և որդւոյ ո̅ղ ճշմարիտ ա̅ծ̅ և Ա̅մ. և 4) Թէ մարգարէք և առաքեալք 'ի

յայտնելն մարդկան զկամս Ա͞ծ և 'ի գրելն զս͞բ գիրս, խօսէին ազդեցութ Հոգւոյն ս͞րյ։

Հ. Ասա զիններրորդ մասն հանգանակին։

Պ. Հաւատամք 'ի միմիայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։

Հ. Զի՞նչ ուսանիմք աստի։

Պ. Թէ Ճշմարիտ եկեղեցի Ք͞րի է մի, կաթուղիկէ ( ընդհանրական ) և առաքելական, զ͞ի յառաքելոց անտի անընդհատ և անփոփոխ շարունակեալ և որ մինչև ցկատարած ծ͞ի ունի շարունակիլ, վ͞ն և պ͞րտ է մեզ յարգել զնա, հնազանդիլ նմա և հրաժարիլ 'ի հերձուածական աղանդոց, որ է բաժանումն 'ի մի միայն ուղղափառ եկեղեցւոյ։

Հ. Ասա զտասներրորդ մասն հանգանակին։

Պ. Հաւատամք 'ի մի մկրտութի, յապաշխարութի, 'ի քաւութի մեղաց։

Հ. Որպիսի ուսումն պարունակի աստ։

Պ. Այս պարունակի 1) ուսումն խորհրդոյ եկեղեցւոյ ս͞բ մկրտութե, և թէ հարկաւորի այն ա͞մ հաւատացելոց միանգամ և եթ. 2) թէ

մարդն ճշմարիտ ապաշխարութ̄ և դարձմամբ քաւի ՚ի մեղաց և գտանէ զթողութի̄ ։

Հ. Վ̄ս է՞ր մկրտութին կոչի խորհուրդ եկեղեցւոյ ։

Պ. Վ̄ս զի ՚ի մկրտութե̄ անդ ներգործէ ծածկաբար շնորհք Ս̄Յ ։

Հ. Գո՞ն արդեօք այլ ևս խորհուրդք եկեղեցւոյ բայց ՚ի մկրտութե̄ ։

Պ. Խորհուրդք եկեղեցւոյ մկրտութ̄ հանդերձ են եօթն այսոքիկ 1) մկրտութի, 2) դրոշմ, 3) հաղորդութի, 4) ապաշխարութի, 5) ձեռնադրութի, 6) պսակ և 7) վերջին օծումն ։

Հ. Ցի՞նչ ի՞նչ եղեալ կայ մկրտութին ։

Պ. Մկրտութին եղեալ է յայնմ, զի հաւատացեալն կամ երեխայն երիցս ընկղմի ՚ի ջուր յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սր̄յ ։

Հ. Վ̄ս է՞ր մկրտի մարդն ։

Պ. Առ ՚ի ծածկաբար սրբիլ ՚ի մեղաց և ընդունել զշնորհսն կենաց ։

Հ. Ցի՞նչ եղեալ է դրոշմն ։

Պ. Ցայնմ, զի մկրտեալն օծանի սր̄ իւղով

և խորհրդաւոր բանիւս, հնչէ շնորհաց Հոգւոյն սրբոյ։

Հ. Զի՞նչ է հաղորդութիւն։

Պ. Հաղորդութիւն է այն, զի հաւատացեալն ի տեսակաւ հացի ճաշակէ զմարմին Ք՟ի և ի տեսակաւ գինւոյ՝ զճշմարիտ արիւն նորա։

Հ. Զի՞նչ օգուտ ընդունի, որ հաղորդի։

Պ. Հաղորդեալն միանայ ընդ Ք՟ի և լինի մասնակից յաւիտենական կենաց։

Հ. Զի՞նչ է ապաշխարութիւն։

Պ. Ապաշխարութիւն է շարժումն հոգւոյ, որով մեղաւորն թողլով զա՟մ մեղս անկեղծ դառնայ առ Ա՟Ծ և ատելով զմեղս իւր խոստովանի զայնս առաջի քահանայից և ի ձեռն նո՟ր ստանայ զթողութիւն մեղաց իւրոց ի Յ՟է Ք՟է։

Հ. Յի՞նչ եղեալ է խորհուրդն ամուսնութեան։

Պ. Յայնմ, զի ընդ աստուածային յօժարութեան փեսային և հարսին օրհնի շաղկապ նց՟ յեկեղեցւոջ ըստ օրինակի միաւորութեան Ք՟ի ընդ եկեղեցւոյ։

Հ. Զի՞նչ է վերջին օծումն։

Պ. Եւ այն, զի հաւանդն օծանի միւռոնաւ և կոչի վն նր յօգնուն շնորհք ողջացուցիչ ։

Հ. Ասա զմետասաններորդ մասն հան-գանակին ։

Պ. Հաւատամք 'ի յարութիւն մեռելոց ։

Հ. Զի՞նչ ուսանիմք մեք աստի ։

Պ. Թէ ամ մեռեալք 'ի սահմանեալն յԱՅ ժամանակի յարիցեն մարմնով, որ յայն-ժամ լիցի անապական և անեղծ ։

Հ. Ասա զերկոտասաններորդ մասն հան-գանակին ։

Պ. Եւ 'ի կեանսն յաւիտենականս (հաւա-տամք)։

Հ. Զի՞նչ ուսուցն աւանդի մեզ յայսմ վերջին մասին ։

Պ. Թէ յետ յարութ մարդկան և դատաս-տանին Քնի լինելոց է կեանք յաւիտենական, ուրանօր հաւատացեալք և որք անցուցեալ են զկեանս յապաշխարութեան և յառաքի-նութեան՝ ընկալցին զանվախճան երջանկութի, իսկ անզեղջ մեղաւորք ենթարկեսցին յաւի-տենական տանջանաց ։

## Յաղագս տէրունական աղօթից։

Հ. Զիա՞րդ հնար է բաժանել զաղօթս տէրունական։

Պ. ՚Ի կոչումն, յեօթն խնդրուածս և ՚ի փառաբանութիւն։

Հ. Ա՛սա զկոչումն կամ զսկիզբն տէրունական աղօթից։

Պ. Հա՛յր մեր, որ յերկինս ես։

Հ. Վասն է՞ր Քրիստոս հրամայեաց մեզ կոչել զԱստուած Հայր։

Պ. Վասն այն, զի մեք կացցուք յաղօթս ոչ միայն երկիւղիւ իբրև ծառայք առաջի նորա, այլ և սիրով և յուսով, որպէս որդիք յանդիման հօր։

Հ. Ասա զառաջին մաղթանս տէրունական աղօթիցն։

Պ. Սուրբ եղիցի անուն քո։

Հ. Զի՞նչ խնդրեմք մեք այսու յԱստուծոյ։

Պ. Զօգնականութիւն նորա, որով մարթասցուք մեք ջերմեռանդութեամբ պահպանել զանուն նորա սուրբ ՚ի միտս և արտասանել զայն շրթամբք

և զի տացէ մեզ անարատ գործովք և կենօք տարածանել զփառս նր ՚ի մէջ մարդկան։

∸· Ա՛սա զերկրորդ մասն աղօթիցն։

Պ· Եկեսցէ արքայութիւն քո։

∸· Զի՞նչ խնդրեմք սովին յԱստուծոյ։

Պ· Սովին խնդրեմք ՚ի նմանէ, զի մի թագաւորեսցէ ՚ի վր մեր մեղքն, այլ զի հոգի նր սբ կատարեսցէ զմն զխորհուրդս և զգործս մեր ՚ի բարին և յերջանկութի մեր։

∸· Ա՛սա զերրորդ մաղթանս աղօթիցն։

Պ· Եղիցին կամք քո որպ յերկինս և յերկրի։

∸· Զի՞նչ խնդրեմք մեք այսու։

Պ· Սովին խնդրուածով մեք բերեմք ՚ի պատարագ զկեանս մեր Այ և խնդրեմք, զի նա արասցէ ընդ մեզ որպ զկամք և հաճոյ իցէ նմա ըստ ամենիմաստ կատարելութն իւրում և թէ զմ որք յերկրի հնազանդեսցէ կամաց նորա, որպ խոնարհին նմա հրեշտակք յերկինս։

∸· Ա՛սա զչորրորդ մաղթանս աղօթիցն։

Պ· Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։

Հ. Զի՞նչ խնդրեմք մեք սովին յԱ՟Յ։

Պ. Խնդրեմք, զի Ա՟Ծ ըստ ամենաբարի նա-խախնամութեան իւրում պարգեւեսցէ մեզ զայն, յոր ինչ ունիմք մեք պէտս 'ի պահպանել զկեանս մեր կամ առ 'ի կեալ. զօ՟ զկերակուր, զզգեստ, զբնակարան եւ զայսոսիկ մեք խնդրեմք 'ի տնէ տալ մեզ միայն առ այս օր առանց հոգալոյ զապագայէն, զի այսպիսի հոգք ընդդէմ են յուսոյ, որ առ Ա՟ստուած։

Հ. Ասա՛ զհինգերրորդ մաղթանս աղօթիցն։

Պ. Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։

Հ. Զի՞նչ խնդրեմք սովին յԱ՟ստուծոյ։

Պ. Սովին խնդրեմք, զի Ա՟Ծ թողցէ մեզ զմեղս, որպէս եւ մեք թողումք այնոցիկ, որք մեղուցեալ են ընդդէմ մեզ կամ զրկեալ են զմեզ։

Հ. Իսկ եթէ մեք ո՛չ թողցուք այլոց, յայն-ժամ ընդդէմ մեզ զի՞նչ։

Պ. Յայնժամ եւ ո՛չ մեք ինքեանք կարեմք ակնունել թողութեան մեղաց յԱ՟Յ. եւ վա՛կ հարկ

է մեզ անշուշտ թողուլ զգրկանս, մեզ արա-րեալս յայլոց, և ջանալ լինել ընդ ամե-նեսեան խաղաղութեամբ և սիրով ։

Հ. Ասա զվեցերրորդ մաղթանս աղօթիցն ։

Պ. Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն ։

Հ. Զի՞նչ խնդրեմք մեք սովին յԱս-տուծոյ ։

Պ. Խնդրեմք 'ի նմանէ, զի մի թոյլ տա-ցէ սատանային խարդաւանել զմեզ և ածել 'ի մեղս ։

Հ. Ասա զեօթներրորդ մաղթանս աղօ-թիցն ։

Պ. Այլ փրկեա զմեզ 'ի չարէ ։

Հ. Զի՞նչ խնդրեմք մեք սովին յԱստու-ծոյ ։

Պ. Զի ազատեսցէ զմեզ Աստուած յա-մենայն չարութենէ և 'ի թշուառութենէ ։

Հ. Ասա զվերջին փառաբանութիւն տէ-րունական աղօթից ։

Պ. Զի քո է արքայութիւն և զօրութի̃ և փառք յաւիտեանս ։

Հ. Ընդէ՞ր յաւելեալ է այդ յաղօթս ։

Պ. Զի՛ աղօթողն ոչ միայն խնդրեսցէ իւրեան զողորմութիւնս յԱստուծոյ ամենակարողէ, այլ և փառս տացէ նմա, նմա միայնում, խնկապ̃ պատշաճեալ յամենեցունց ։

## Յաղագս տասն պատուիրանաց։

Հ. Ո՞ր է առաջին ՚ի պատուիրանս օրինաց Աստուծոյ ։

Պ. Նախ՝ ես եմ Տէր Աստուած քո, մի՛ ունիցիս քեզ զայլ Աստուած առաջի իմ։

Հ. Զի՞նչ հրամայէ մեզ Աստուած պատուիրանաւս այսուիկ։

Պ. Հրամայէ մեզ նախ՝ ճանաչել զնա մտօք. երկրորդ՝ հաւատալ ՚ի նա, յուսալ ՚ի նա և սիրել զնա սրտիւ. երրորդ՝ գովաբանել և հռչակել զնա բերանով. չորրորդ՝ երկրպագել նմա բոլորով գթութեամբ մերով և ամենայն զօրութեամբ պաշտել զնա։ և հինգերրորդ՝ չունել զայլ Աստուած բնաւ ՚ի նմանէ միայնոյ ճշմարտէ, և զփառս, պատշաճեալս նմա, չտալ արարածոց և ձեռագործաց ։

Հ. Ո՞ր է երկ՟ պատուիրան Աստուծոյ։

Պ. Մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամենայնի՝ որ ինչ յերկինս ՚ի վեր և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ։

Հ. Զի՞նչ արգելու՞ մեզ Աստուած յայսմ պատուիրանի։

Պ. Արգելու երկրպագանել կռոց։

Հ. Զի՞նչ է կուռքն։

Պ. Իսկական ձևակերպութիւն իրի ինչ կամ մտացածին աստուածութեան, որում երկրպագանեն կռապաշտք իբրև Աստուծոյ ճշմարտի։

Հ. Զի՞նչ պիտո իցէ իմանալ զյարգանաց, զոր ընծայեմք մեք պատկերաց։

Պ. Պատկերք կամ ձևակերպմունք ճշմարտին Աստուծոյ և կամ սրբոց նորա մարմնով ՚ի գործ ածին առ մեզ վասն առաւել ևս ջերմեռանդաբար յուշ ածելոյ զգործս Աստուծոյ և զսրբոց նորա և զորս առաջի աչաց ունելով մեր աղօթեմք ոչ նոցա, այլ Աստուծոյ։ Բայց սակայն ուղղակի պաշտօ-

նատարութիւն պատկերաց կարէ փոխել մարատիս կռապաշտութեան, եթէ զմիակերպ յարգանս ընծայեսցէ ոք նոցա և յուսասցի 'ի նիւթս նոցա ոչ համբառնալով զմիտս և զսիրտ առ այն, զոր նոքին պատկերացուցանեն ։

Հ. Ո՞ր է երրորդ պատուիրան Աստուծոյ։

Պ. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո 'ի վերայ սնոտեաց ։

Հ. Զի՞նչ արգելու մեզ Աստուած 'ի ձեռն այսր պատուիրանի ։

Պ. Արգելու մեզ 'ի գործ ածել զանուն Աստուծոյ 'ի նանիր ։

Հ. Ե՞րբ հարկ լիցէ 'ի գործ ածել զանուն Աստուծոյ ։

Պ. Յաղօթս, 'ի հրահանգս զԱստուծոյ, յուխտս և յերդմունս ըստ պահանջման վերին կառավարութեան և այն ևս՝ երկիւղածութեամբ և ջերմեռանդութեամբ ։

Հ. Իսկ 'ի սովորական խօսակցութիւնս հրամայեա՞լ է արդեօք երդնուլ։

Պ. Ո՛չ երբէք, զի այդ ընդդէմ է եր-րորդ պատուիրանին Աստուծոյ ։

Հ. Ո՞ր է չորրորդ պատուիրան տեառն ։

Պ. Յիշեա՛ սրբել զօրն շաբաթուն, ո՛ր զկիւրակէս ։

Հ. Զի՞նչ հրամայէ մեզ Աստուած այսու պատուիրանաւ ։

Պ. Հրամայէ մեզ զվեց աւուրս 'ի շաբաթու աշխատել և գործել, իսկ զեօթներրորդ օրն սրբել Աստուծոյ, ո՛ր զօրն զայն ողջոյն պարապել յաղօթս, 'ի հրահանգութիւն զԱստուծոյ և յաստուածահաճոյ գործս ։

Հ. Վասն է՞ր պարտ իցէ ընծայել զեօթներրորդ օրն Աստուծոյ ։

Պ. Վասն զի արարեալ 'ի վեց աւուրս զ՟ն ա՟մ, Աստուած հանգեաւ 'ի գործոյ յեօթներրորդ աւուր ։

Հ. Եւ զո՞ր խոկալ՟ օր տօնել պարտ իցէ վասն այսր ։

Պ. 'Ի հին ժամանակս տօնէին զշաբաթ, բայց 'ի ժամանակէ յարութեան Քրիստոսի

եկեղեցին Քրիստոնէական տօնէ զօրն կիւ-
րակէ։

Հ. Գո՞ն ևս աւուրք, զորս պարտ իցէ նոյնպէս սրբել։

Պ. Այո՛ գոն, զ՚ի, աւուրք հրաշափառ տօնից Քրիստոսի, աւուրք տօնից սրբոյ կուսին Մարիամու, աւուրք երևելի սրբոց, աւուրք պահոց, զորս նոյնօրինակ արժան է մեզ տօնել պարտուպատշաճ ժուժկալութեամբ ըստ սահմանադրութեան եկեղեցւոյ։

Հ. Որ է հինգերորդ պատուիրան Աստուծոյ։

Պ. Պատուեա՛ զհայր քո և զմայր քո, զի բարի լիցի քեզ և երկայնակեաց լիցիս ՚ի վերայ երկրի։

Հ. Զի՞նչ հրամայէ մեզ Աստուած այսու պատուիրանաւ։

Պ. Հրամայէ յարգել զծնողս և հնազանդել նոցա։

Հ. Մի միայն զծնո՞ղս արգեօք արժան է պատուել։

Պ. Ո՛չ, այլ բաց 'ի նոցանէ ըստ հրամանի այսր իսկ պատուիրանի պարտ է ամենեցուն պատուել և զայնոսիկ, որք 'ի բազում ժամանակս լինին մեզ 'ի տեղի ծնողաց, որ գոն, պատուել նախ՝ զթագաւորն մեր, իբրև զհայր ողջոյն ազգի և տէրութեան. եր̃կդ՝ զհովիւս և զհոգևոր ուսուցիչս. եր̃դ՝ զայնոսիկ, որք մեծ են քան զմեզ հասակաւ. չորրորդ՝ զսնուցիչս և զբարերարս. հինգերորդ՝ զմեծաւորս և զտէրս ։

Հ. Ո՞ր է վեցերորդ պատուիրան ։

Պ. Մի՛ սպանաներ ։

Հ. Զի՞նչ արգելու մեզ Աստուած այսու պատուիրանաւ ։

Պ. Արգելու մեզ սպանանել զմարդիկ թէ բռնութեամբ և թէ խորամանկութեամբ, և առ հասարակ զայն ամենայն, որով հնար է մեզ վրդովել զանկասկած վիճակ և զանդորրութիւն մերձաւորին. արգելեալ լինին նոյնպէս կագ, կռիւ, ատելութիւն, նախանձ և զանազան խստութիւնք ։

Հ. Ո՞ր է եօթներորդ պատուիրան։

Պ. Մի՛ շնար։

Հ. Զի՞նչ արգելեալ լինի յԱստուծոյ յայսմ պատուիրանի։

Պ. Արգելեալ լինին ամենայն պղծութիւնք գործոց, շնութիւն և ամենայն գարշ և աղտեղի մարմնական կապակցութիւնք, և այն ամ, որք կարեն գրգռել զանկարգ մարմնական տռփանս, որգոն, արբեցութիւն, անպատկառ ցոփութիւնք լեզուի և շարժուած մարմնոյ. ընթերցանութիւն գայթակղեցուցիչ գրոց, պատկառելի երգք և ունկնդրութիւն նոցին, հայեցուածք 'ի գայթակղեցուցիչ ձևակերպութիւնս պատկերաց և 'ի զանազան տեսարանս։

Հ. Ո՞ր է ութերորդ պատուիրան։

Պ. Մի՛ գողանար։

Հ. Զի՞նչ արգելու մեզ Աստուած յայսմ պատուիրանի։

Պ. Արգելու զսեպհականն ուրուք զիրս այլոց բռնութեամբ և կամ խորամանկութ։

Հ. Ո՞ր է իններորդ պատուիրան ։

Պ. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ ։

Հ. Զի՞նչ արգելու Աստուած յայսմ պատուիրանի ։

Պ. Արգելու վկայել սուտ զումեքէ թէ ՚ի դատաստանի և թէ արտաքոյ այնորիկ, զծ̅ առնել զրպարտութիւնս, վատանուանութիւնս և չարախօսութիւնս զումեքէ կամ առաջի ուրուք և յորում և իցէ վայրի ստաբանել և խաբել ։

Հ. Ո՞ր է տասներորդ պատուիրան ։

Պ. Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, և մի՛ ամենայն իրաց, որք նորա իցեն, և՛ն ։

Հ. Զի՞նչ արգելեալ լինի մեզ աստ յԱստուծոյ ։

Պ. Արգելեալ լինի ոչ միայն գործել զչար, այլ և ցանկալ ումեք զչար կամ մտածել ինչ չար, զի մի՛ մտածմունք և չար ցանկութիւնք եղցեն ՚ի կատար ։

Հ. Զի՞արդ հնար է պահպանել զինքն յա̅մ չար գործոյ, ցանկութեանց և մտածմանց ։

Պ. ՚Ի մտի ունելով անմոռաց և յուշ ածելով հանապազ թէ ամենայն արդարադատ և ամենակարող տէրն և հաստիչն տեսանէ զմեզ և զամենայն գործս մեր անդադար ։ Ո՜չ մինչ գայ ՚ի միտս մեր ցանկութիւն մեղաց, պարտ է մեզ բացագանչել ընդ Յովսեփայ, որդւոյ Յակոբայ,, Զիա՞րդ արարից ես զբանս զայս չար և մեղայց առաջի Աստուծոյ՚՚ ։

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

### առ համառօտ կրօնագիտութիւն ։

Խրատաբանութիւն քրիստոնէութեան, վերաբերեալ ի առ հոգւոյն զօրաջանայ ։

Գլխաւոր կանոնք վարուց ։

ա. Սրբազան առաքեալն Պետրոս գրէ ,,յԱստուծոյ երկերո՛ւք, զթագաւորն պատուեցէք՚՚ (Պետրոս 2։ 17) և նոյն ինքն տէրն մեր Քրիստոս ասէ,, տո՛ւք զկայսերն կայսեր

և զԱստուածոյն՝ Աստուծոյ։ (Մատ. իբ. 21)
Ասացին գլխաւոր կանոնք վերուց վասն քրիստոնէից իբրև հպատակաց։

ը. Ապաքէն Ք̃սադաւան զօրականին է միշտ ունել ՚ի մտի անմոռաց զերկոսին գլխաւոր պարտաւորութիւն, որք են, ջերմեռանդն պաշտել զԱ̃Ծ և հաւատարմաբար ծառայել թագաւորի։

## Պարտաւորութիւնք մեր ՚ի վերաբերութ̃ առ Աստուած։

թ. Հաւատամ բոլորով սրտիւ ՚ի մի միայն Ա̃Ծ ՚ի հայր, յորդի և ՚ի հոգին ս̃բ, որ դաւանի ուղղափառ եկեղեցի մեր. յայսմ դաւանութ̃ բովանդակի ամենայաղթ զօրութ̃ Ա̃Ծային, այս է յաղթութիւն, յաղթող աշխարհի, հաւատք մեր։ (1 Յովհ. Ե. 4)

ժ. Աղօթեմ հաւատովք։ Որովհետև Ա̃Ծ է արարիչ ամ̃, վ̃ն այն չիք ինչ բարի, որ լինի առանց Ա̃Յ, և այն մի միայն Ա̃Ծ, որ ինչ լինի աղօթիւք, զոր ինչ, զոր և խնդրիցէք յա-

[illegible] (Մատթ. իգ. 23)

Ե. Եթէ գործք ծառայութ ոչ թողուն զքեզ փութալ յաղօթս յեկեղեցի ՚ի սահմանագրեալ աւուր և ՚ի ժամու, կոչեա զանուն ՏՆ և տն մերոյ ՅԻ, յորում տեղւոջ և յորում ժամանակի և իցես՝ ըստ բանի Դաւթի, [illegible] (Սաղմ. Ճժը. 22)։

Զ. Սիրեա զՏծ, որ զամենաբարի զՀայր և երկնիր ածել զնա ՚ի սրտմտութի չար գործովք իբրև զամենագէտ և զարդարադատ դատաւոր. աչք տն ՚ի վր արդարոց և ականջք նր ՚ի վր աղօթից նց. երեսք տն ՚ի վր չարագործաց սատակել յերկրէ զյիշատակս նց։ (Սաղմ. Լդ. 16, 17.)

Է. Եթէ մեղուցեալ ես դու, մի յապաղեր փութալ ՚ի զղջումն, յուսալից զոլով գտանել յԱստուծոյ զներումն վս փրկչին մեղաւորաց ՅԻ ՔԻ, որդւոյն ԱՆ, որոյ արիւն սրբէ զմեզ յամ մեղաց ։ (1 Յովհ. ա. 7)

## Ի վերաբերումն առ Թագաւորն։

Ը. Պաշտպանեա՛ յամ դիպուածս զհաւատարմութի առ Թագաւորն, զի երդուեալ ես յանուն ԱՅ լինել նմա հաւատարիմ. զի եթէ գտցիս ուխտադրուժ առ Թագաւորն, ուխտադրուժ ես և առ ԱԾ, ապա և զվ̄ն սուտերդմանդ ընկալցի հոգիդ։

Թ. Լեր բաւական ռոճկաւ, զոր կարգեալ է քեզ Թագաւորդ, զի այս է պատուիրան, զոր ետ ԱԾ զօրականաց ՚ի ձեռն Յովհաննու մկրտչին, շա՛տ լիցին ձեզ թոշակքն ձեր։ (Ղուկ. գ. 14).

## Ի վերաբերումն առ առաջնորդս։

Ժ. Հնազանդեա՛ առաջնորդաց, վ̄ն հնազանդութեդ, որ առ Թագաւորն, յորմէ կարգեալ են նք. զի պատուիրան տն հրամայէ, Հնազանդ լերուք ամ մարդկեղէն սահմանադրութե վ̄ն տեառն, եթէ Թագաւորի՝ իբրև առաւելումն. եթէ դատաւորաց՝ իբրև ՚ի նմանէ առաքելոց ՚ի վրէժխնդրութիւն չարագործաց և ՚ի գովութիւն բարեգործաց։ (1 Պետր. բ. 13. 14)

## ’Ի վերաբերութ՟ առ ծառայակիցս ։

ԺԱ. Կեաց յեղբայրական համաձայնութ՟ ը՟ ամենեսին և պատրաստ լեր մատուցանել նմ՟ զնպաստ յամ՟ աշխատանս և ’ի կարիս , զի եղբայր յեղբօրէ օգնեալ եղբր որպէս քաղաք ամուր եւ հզօր է եղբր շնորհաւորեալ միաբանութեամբ ։ (առակ · ԺԸ · 19)

ԺԲ. Իսկ եթէ հրամայութեն զքեզ ’ի գործ արտաքոյ, հակառակ օրինաց և ամ՟ երդման, յուշ ած զբան առաքելոց, հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան, (գործ · Ե · 29) և ոչ միայն հաստատուն լեր ’ի չհամաձայնել ը՟ չարն , այլ ջանա՛ և ս խոհեմութ՟ իմն խափան լինել չարին ։

## ’Ի վերաբերութ՟ առ գործս ծառայութեան ։

ԺԳ. ’Ի լինելդ պահապան լեր արթուն և աշալուրջ , զի անհոգ և անհաւատարիմ զօրականն ’ի պահպանութ՟ ժամու մեղանչէ ընդդէմ երդման իւրոյ և բաց յայդմանէ

լինիս հաղորդակից յանցանացն, որք 'ի պատճառս անհոգ և անարժուն պահապանի կարեն յառաջանալ ։

ԺԴ. 'Ի պատերազմի լեր անվեհեր և քաջ, յուսալով յԱծ՝ յամենազօր պաշտպանն և 'ի նմաստամատոյցն. կրկնեմ քեզ զասա-ցեալն 'ի Դաւթայ, յԱծ յուսացայ և ո՛չ երկ-նչեցայ, զի՞ արասցէ ինձ մարդ։ (Սաղմ. ԾԵ. 12) Աչք Տեառն 'ի վերայ երկիւղածաց իւրոց, որք յուսան յողորմութիւն նորա, փրկել 'ի մահուանէ զանձինս նոցա ։

ԺԵ. Մի՛ կորուսաներ 'ի փորձուն զհոգ արթնուն, զի եթէ հաւատարիմ ես դու 'ի պաշտօնիդ, յայնժամ Ած կամ փրկեսցէ զքեզ 'ի մահուանէ, կամ փրկեսցէ մահուամբ, որով ընկալցիս զանապական զպսակն։ Եւ կմ՝ ո՛չ հասցեն առ քեզ չարք և տանջանք ո՛չ մերձես-ցին 'ի յարկս քո, զի հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վն քո պահել զքեզ յամ ճանապարհս քո։ (Սաղմ. Ղ. 10, 11) կամ ես՝ հոգի քո լիցի 'ի ձեռս ԱՅ 'ի թիւս այնոցիկ, որք թէպէտ և ընդունին

առաջի մարդկան զտանջանս և զմահ, բայց լի են յուսով անմահութեան։ Յիշեա և զբանս փրկչին մերոյ և տն Յի, Մի՛ երկնչիք յայնցանէ, որք սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել։ (Մատթ. Ժ. 28)

ԺԶ. Լեր աշխատասէր և տա՛ր մտադիւր ծանրութեան պաշտօնից, զի նախասկիզբն մարդոյ և նովին ամ մարդկան ետ Ած զպատուիրանս զայս, Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց։ (Ծննդ. Գ. 17).

## Ի վերաբերութեան առ ինքն։

ԺԷ. Մի այնքան պահպաներ զմարմինդ ՚ի վիրաց և ՚ի մաշելոյ զայն յոգնավաստակ ճգամբք, որքան զհոգիդ ՚ի խոցուածոց մեղաց և զմարմինդ ՚ի պղծելոյ և ՚ի թուլացուցանելոյ մեղանչական գործովք։ Զգո՛յշ լեր չարկանել զԱծ ՚ի մոռացօնս, որ մթագնէ և ծանրացուցանէ զհոգի. զգո՛յշ լեր և ՚ի մարմնական անժուժկալութեան, որ խանգարէ թէ զմարմին և թէ զհոգի։

ԺԸ. Գո՛ւն գործեա յաղթել յօժարութեանցդ իբրև արտաքին թշնամեաց. յայսմիկ դերա-կատար յաղթութեան խրախուսէ զքեզ թագա-ւորն երկնաւոր, յասելն՝ Որ յաղթէ՝ ժառան-գեսցէ զայս ամ. և ես եղէց նորա Աստուած և նա եղիցի ինձ որդի: Իսկ ծուլացն և անհաւատից և պղծոց և սպանողաց և պոռնկաց և կախարդաց և կռա-պաշտից և գեղապաշտաց և ամ ստոց, ամենայնց, որոց բաժին ՚ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով, որ է մահն երկրորդ:

## ՎԱԽՃԱՆ·



ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ